Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn
1982

17999

ՎՕԼԳԷՔ

ՄԻՔՐՕ-ՄԵԳԱՍ

ՃԵՐՄԱԿ ՈՒ ՍԵՒ

ԺԱՆՕ ՈՒ ՔՕԼԷՆ

ԼԷՕ
ԹԱՐԳՄԱՆԻՑ
ՔԱՂԱՔԱՐ.
ՄԱՍՈՒՐԵՄԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՏԻՏԻԵԱՆ՝

1869

ՎՕԼԳԷՐ

ՄԻՔՐՕ-ՄԵՂԱՍ

ՃԵՐՄԱԿ ՈՒ ՍԵՒ

ԺԱՆՕ ՈՒ ՔՕԼԷՆ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

1876.

Լ. Է Օ Ա
ԳՐԱԴԱՐԱՆ



ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԷՏԷԵԱՆ

1869

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅԿ-ՍՍՀ
Армянская ССР

Գ 1982-60
Հ 1989

ՑԱՌԱՋԱԲԱՆ ԹԱՐԳՄԱՆՉԻՆ

ՄԻՔՐՕ—ՄԵՂԱՍ՝ յունական անուն, որ կը նշանակէ Պզտիկ—Մեծ և հայերէնի մէջ ևս նոյնը պահեցինք, գրեթէ վէպս խմբագրը կ'ամփոփի ու անպիտանին ԿԷ-ԱԷԶԷ վիպասանութեան տեսակ մը հետևութիւն կրնայ համարուիլ։ Միայն Կիւլլիվերը քաղաքական մարդիկն ու ժողովրդի իմաստները մանաւորապէս կը հեգնէ, իսկ Միքրօ—Մեղաս խմբագրական այլ և այլ գրութիւնները։

Հեղինակը մոռցին երկնարնակ մեծայաղթ մարդիկ կը ստեղծէ, և թերևս անոնց գոյութիւնը հնարաւոր սեպելով՝ երկիրցւոց հետ կը հաճմատէ, նոյնպէս և փոքրագոյն էակներու. բայց գարձեալ անոնց քով մեր ոչնչութիւնը լիովին երևան հանելէն ետև, թէ հասակի, թէ մտքի և թէ վայելումներու կողմէ, իրեն դիւցազունները խիստ անչնչակար ու ստորին էակներ կը դանէ։ Ասոնք կը հետևի Պզտիկ—Մեծ անունն որ տուեր է այն վէպին։

Ուրեմն ո՞ր չափ ևս աւելի մանր պիտի երևին մարդիկ։ Ո՞ր չափ ամբիծաբլի է իրենց գոռոզութիւնն աշխարհիս վրայ, վասն զի կարծեն թէ գերադոյն էին ամէն բան իրենց համար ստեղծեր է. կը պարծին որ ամենազէտ, անմահ, երջանիկ և հզօր են. և իրենց տեսլին և պաշարումին համաձայն ամէն բան նաև զԱստուած կը կազմեն։ Վերջը հեղինակն այլ և այլ խմբագրութիւններու կարծիքն առաջ բերելով՝ մէկ քանին կը ջնջէ, մէկ քանին կը հաստատէ. և կը հետևցնէ թէ՝ իրերու բուն իսկ պատճառը գեռ գտնելու վրայ են։ Վէպը կ'աւարտէ ըսելով թէ մարդիկ իրարմէ՛ Աստուծոյ ընտիր արարածներն են, բայց ինչ որ ընեն միշտ ոգէտ ու փառամոլ են, և իրենց չէ տրուած ամէն բան հասկընալ։

Այս վէպը 1856 ին յօդուած առ յօդուած Մոսկո լրագրին մէջ հրատարակուելու ատեն՝ արքայազն ազգայիններէն ոմանք, և մանաւանդ Մեծ. Պուրսացի Զամուրճեան Պատուելին գոյթակցեցաւ և անոր քննադատութեան առարկայ եղաւ։ Այն ատեն Մոսկոյ միջոցաւ մեր տուած պատասխանն այս տեղ անցնելու արժան կը դատենք. չէ թէ Պատուելին էրաստախան ընելու, այլ հասկցնելու համար թէ տան երեք տարի առաջ ինչպէս շուտով ֆանտիզմանիչ մ'ոնհաստարի կարգը կ'անցներ...։

Ամէն մարդ արի և վեհ թշնամին կը յարգէ և անոր հետ դէմ առ դէմ կռուիլն իրեն պատիւ համարելով՝ 'ի զէն կը վազէ աներկիւղ. բայց ուրիշ տեսակ թշնամի մ՝ալ կայ որուն կ՝տարակուսինք պատշաճ անուն մը տալու, որ փոխանակ արիաբար և յայտնապէս կռուելու, բարեկամ կը ձևանայ ու գաղտնի մեքենաներ կը հնարէ. որուն դէմքը հայ ու սիրտը ճիզվիդ է. որ միշտ նկուն և անզօր՝ մեծ մեծ կը ջարդէ և խորտակեալ զէնքովը կը դառնայ մէյ մը կը խայթէ։ Ո՞վ է ան թշնամին, ո՞վ է ան ճիզվիդներուն լաստերը, ո՞վ է ան... բայց ո՞վ չճանչնար Զօհալը։

Զօհալը՝ զոր կրօնամոլութիւնը, քէնը և շահադիտութիւնը ծնան, Զօհալը՝ որուն անհանգարտ գրիչն առնէ մ՝'ի վեր ազգին մէջ խռովութեան և երկպառակութեան սերմ կը ցանե, Զօհալը՝ որուն ասուաձաբան գլուխը կրօնական վէճ մը կը հնչեցնէ՝ ալլադեմ հրեշ մը կը ծնի, խելքովը ազգին դէմ դարան կը գօրծէ, և Մասիսի բուռն հաբուածներուն տակ ընկճելով՝ մեղմ գոչելու և զգաստանալու տեղը, գոհ և ուրախ է որ հետաքրքիր ամբոխը հոն պատերազմին տեղը վազէ, գինքը տեսնէ, և միամիտը գոչէ. «Նայէ՛, իր շափազանց եռանդին զոհ եղաւ մեր սիրելին»։ բայց ողջամիտը։ «Ո՛ւշ եկար, ուշ, նոր Լայոլա, ալ չենք բռնուիր քեզի». կը պոռայ քահ քահը ձգելով։

Ահա աս է ան գրիչը որ ատեն մը թափթփած և տղմալից ոճով մը Հայերը լուսաւորելու եկաւ իր հայապանդի մէջ. և յանկարծ ճամբան փոխեց և մինակ միամիտները որոնք իր նպատակին աւելի օգտակար սեպեց. ահա աս է ան վարպետ ձեռքը՝ որ իր մոլորեալ նաւուն զեկը մէկ մը դէպ 'ի բաղդաքանութիւն ուղղեց. և երբոր հոն անցնող փչեց, զեկը դարձուց դէպ 'ի Խաալիայ ծովեզերը՝ բայց ալեկոծութեան հանդիպելով նաւը խորտակեցաւ։ Հիմա ուրիշ դէմք և ուրիշ կերպարանք մ՝առած, Հայ՝ հայերէնը թուրքումբեց, և տաճկերէնին մէջ ամբելով՝ մուլթին մէջ կամցուն մը սահեցաւ և Մասիսի սորոյտը հասաւ։ Ի՞նչ էր նպատակը։ Անոր զաղաթը ելնել և Լայոլային դրօշակը հոն կանգնել։ Բայց հոն Հայկ արքուն և կանգուն կը հսկէր, և հալիս թէ սոխը քայլ մը կ՝առնու, և ահա Մասիսին ահագին քարեր կը ըրդին, գինքը թաւալելը կը բերեն և կը ճնշեն։*

Ո՜հ, Զօր—հալ, սարսռելիս գժուարին վէճակ։ Բայց մի՛ կարծէք թէ շունչը հատաւ. ոչ, դեռ կը աքայ և կը հեծէ, լեզուն կը խաղայ, աչքը դոց, ականջները բաց, իր վարպետն ու խորհրդակիցները Լայոլա, Պաղէլ, Էռիօպար օգնութեան կը կանչէ, Ինդիքոը կը դրդէ, ձեռքի

Ակնարկութիւն՝ նոյն ժամանակը Մասիսին և Զօհալին մէջ անցած իրողութեան վրայ։

տակէ իր համամիտ եղբարցը ականջին կը փսփսայ, քիչ մ՝ոգի կ՝առնու, կէս մը կը կանգնի վիրաւոր և փոշելից և բերանը կը բանայ. Ինչու. իր Զօր—հալին չնայելով Մասիսը խածնելու և կորած ակռաները Միքիրօ—Մեղասին ցուցընելու համար։

Ուրեմն իրաւամբ կ՝ըսեմ որ աւելորդ է ասանկ թշնամի մը դէմ զինիլ. վասն զի արդէն ինկած է և խաղացած ծածուկ խաղերուն թելերը հասարակութեան աչքին կը զարնէն։ Բայց երբոր կրկին կ՝ելնէ և սուրը յաղթողին և ազգին սիրտը խօթելու ճիգ կ՝ընէ, ան ատեն վերհանձնութիւնը մեկդի թողլով վերջին հարուածը տալու է իրեն։

Զօհալի ճարը հասած՝ և քինառու սրտին վրէժը կերպով մը լուծելու անկարող՝ կարճ ճամբայ մը կ՝ընտրէ իրաւունք ստանալու համար։ Իր ապրիլ 1 թիւին մէջ զեղ անհաւատի կարդը կը դասէ՝ ուրիշ անհաւատ անձի մը թարգմանած Միքիրօ—Մեղասս վէպը տպելնուդ համար։ Ո՜հ անհնարին յանդգնութեան։ Քիչ շատ գիտէի որ Զօհալին հեղինակը քաջ ասուաձաբան, անուանի գիտնական, ուղիղ արամաբան և միջին դարու հարազատ զաւակն է, բայց երբէք զրպարտիչ և քուռ բլալը չ՝գիտէի։ Զգիտէի որ ազգին մէջ հաւատարմնական ատեանը կանգներ և անոր գլուխը կեցեր է։ Թէ որ տեղեկութիւն ունենայի, նախ ծածուկ մը Միքրօ—Մեղասը Երեսէն (զօհալ) ատեանը կ՝ուղարկէի որ քննուի։ Բայց հաւատի եմ որ առանց քննելու զանի ողջ ողջ կ՝այրեր, թարգմանիչն ալ մէկ տեղ։ Մէկ կողմն ուրախ եմ որ աս փորձանքէն ազատեցայ, միւս կողմն կը մտածեմ թէ ինչ է Միքրօ—Մեղասին յանցանքը։ Մի՞թէ Վոլտէրին գրչէն ծներ է։ Բայց ամենուն յայտնի է որ աս հռչակաւոր մատենագիրը, խմաստասէրը, պատմիչը, բանասաղծը այնչափ բաղմաթիւ գրուածներ ունի, զորս կարդալը միայն քանի մը տարիի կարօտ է։ Ընտարակոյս աս բաղմահատոր մատեաններուն մէջ ընտրին ալ կայ, գեղն ալ կայ, և ասոր օրինակը մինակ Վոլտէրի վրայ չտեսնուիր։ Ուստի մենք ալ գաղղիացի մատենագրին կրօնական թիւր տեսութիւնները դուրս ձգելով՝ հարկ սեպեցինք զատել և ընտրել անոր քանի մը բարոյական և խմաստալից էջերը և ձեր պատուական լրագրոյն մէջ օրատարակել։ Զօհալը ամենեն աւելի Միքրօ—Մեղասի դէմ վառեր բորբոքեր է. ինչու համար արդեօք... կարծեմ թէ Աստուծոյ գոյութիւնը և մեծութիւնը հռչակելուն՝ և անոր փառքը կապտել ուզող ճիզվիդականաց դալչելուն համար է։ Զօհալը թող հեղինակին ապաշ աս բանիս պատասխանը, սակայն ապաշելու ալ հարկ չկայ. թող իբրև երկրորդ Ֆիբերոն մ՝երթայ լսելիքը լսէ...։

Զօհալ ասով չշատանար. հերիք չէ զմեզ անհաւատ կոչելը, խելքովը աս մուրն ազգին վրայ ալ քսել կ՝ուզէ. և աս բանս հաստատելու համար իր

տրամաբանական ժանդոտ դէնքը ձեռք կ'առնու ու կը դոչէ. «Ինդիվիդուալ կ'ըսէ թէ հայերուն մէկ մասը Վալդերական են. ուրեմն ես ալ կ'ըսեմ թէ հայերուն մէկ մասը Վալդերական են։» Ինդիվիդուալ կը ճանչնանք. կը կը մնայ հանիսալ թէ՝ Վալդէր կարդացողը միթէ՝ անհաւատ կըլլայ. Պղատոն, Արիստոտէլ կարդացողը միթէ՝ կռապաշտ կըլլայ. Զօհալ կարդացողը միթէ՝ ճիղվիգ կըլլայ։ Բաւական է որ մարդ մը քրիստոնէական ճշմարտութիւններուն մէջ մնալ ըլլայ և իր կրօնքը ճանչնայ։ Զօհալէն հեղինակն իր մտայ և կենայ խոտորնակ ընթացքին համեմատ կը դատէ զանձնքը ու չսխալիր։ Մինակ կը սխալի երբոր միամտաբար կը կարծէ թէ ան խօսքս «Զօհալը վճռեց» իբրև պատգամ կ'ընդունուի, ինչպէս ժամանակ մ'ամէն բերան Պլուտարքոսին բերնէն կախուեր էին։ Զօհալը ասկից առաջ ալ ըսեր էր թէ՝ հռովմական եկեղեցիին հեռացողը բողոքականութեան կը մտնէնայ, հայերը անկէց հեռու են (բարեբաղդաբար) ուրեմն բողոքական են։»

Ահա այսպէս կը տրամաբանէ Զօհալ ու կաղն 'ի կաղն առաջ կ'զայ մինչև որ փորած վիհին մէջ գլորի։ Ահա այս բանարկու ձեւերով կուզէ խաբել ազգը։ Ահա այսպէս ամենուն միտքը պղտորել կը ճգնի, թէ և մինակ իր պղտոր և նեխոտ գրչին ծայրը ցուցընելի զատ բան մը չշահիր։ Է՛հ, թող գրէ, թող սուտ ստի վրայ գիրէ, թող զրպարտէ. բնաւ վախնալիք բան մը չունինք։ Արդէն փորձառու ենք. և ազգը աւնոր վախճանն ու միտքը ճանչցած է։ Արդէն գիտենք որուն արբանեակն է։ Շատոնց անցեր է իր օրը, շատոնց մարեր են միջին դարու խարդեղերը, իր մէկ հատիկ ապաւէնը։ Ուրեմն կամ թող լռէ, կամ մինակ իրեն համար գրէ. գիտցածը իրեն համար պահէ և ինչ որ գրած ունի անգամ մ'աչքէ թող անցնէ. և որովհետև Մխիթար—Մեղրա սրտին վրայ քար մը է և չէ կրցեր մարսել, թող սխալանք մը գտնելու համար ատենով ըրած թարգմանութիւնները միմը աչքէ անցունէ և գտնէ իր սկզբանց (չունի որ) հաւատարիմ մնայ։ Լաճէ, ճօյ, Պլէդ—Բոսֆալ Հռոմն դատապարտեալ հեղինակներ են, ի՞նչպէս յանդգներ է այն հեղինակներուն գործերը թարգմանելու։ Ուստի ուրիշ անգամ Մխիթար—Մեղրային վրայ երկարօրէն խօսելու ժամանակը, ինչպէս որ կը խոստանայ, թո՛ղ մեկնէ նաև մեզի թէ ի՞նչու համար իր կարծեաց մէջ այս անհամաձայնութիւնը կը տիրէ, և թող նստի՝ Բոսֆալայ խորհրդաւորիներուն անունով՝ իր կարծեօքը հայերենի թարգմանած գիրքը՝ բուն հանգանալի հայերէն լեզուի դարձնէ, որպէսզի և վերջը նոյն հեղինակին Գաւառական նամականի անուն գիրքն ալ թարգմանէ...որով իր բռնած գրութիւնը վրայ ազգին ունեցած ճիշդ կարծիքը լացատրած կըլլայ, և վրան զմայլող միամիտներու փոքրիկ ակումբ մ'ալ, թէ որ կայ, քովէն կը ցրուէ։

Մ. ՄԱՄՈՒՐԵԱՆ

ՄԻՔՐՕ—ՄԵՂԱՍ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Սիրիոս ասպետը Բնակարանը Ֆոռնիսպոռնիոնը դեպ ի Եբեակ ասպետը

Սիրիոս ասպետին բոլորը շրջող մոլորակներուն մէջ կուն մէջ խիստ ուշիմ պատանի մը կար։ Ան պատանին մօտերս մեր փոքրիկ մրջիւնոցը դալով տեսնելու պատիւ ունեցայ։ Իր անունը Միքրօ—Մեղաս էր, անուն մ'որ մեծամեծներու քաջ կը վայլէ։ Հասակին ութ մղոն բարձր էր. ութ մղոն ըսելով կիմանամ քսան և չորս հազար երկրաչափական քայլ. ամէն մէկը հինգ ոտք։

Քանի մը թուականներ՝ որ միշտ հասարակութեան պիտանի մարդիկ են, խիզոյն հիմա գրիչը կ'առնուն և կը գտնեն, որ Պ. Միքրօ—Մեղաս, Սիրիոս աշխարհին բնակիչը, ոտքէն մինչև գլուխը քսան և չորս հազար քայլ ունենալով որ ըսել է հարիւր քսան հազար ոտք, և ըստ որում՝ մենք երկրաբնակներ՝ հազիւ հինգ ոտքի կը հասնինք, մեր գեղին շրջանակին ինը հազար մղոն ըլլալով, կը գտնեն կ'ըսեմ, որ իր ծնած դունդն 'ի հարկէ և անվրէպ քսան և մէկ միլիոն վեց հարիւր հազար անգամ մերինէն աւելի մեծ շրջանակ մը պիտի ունենայ։

Այս երևոյթս սարդ և հասարակ բան մ՚է բնութեան մէջ։ Եթէ Իտալեոյ փոքրիկ տէրութիւնները՝ որոց չորս գին կէս ժամու մէջ մարդ կրնայ դառնալ՝ Տաճկաստանի, Ռուսաստանի կամ Ճինաստանի պետութիւններու հետ բաղդատենք, խիստ աղօտ պատկեր մը կ՚ունենանք այն այլ և այլ զանազանութիւններուն որ բնութիւնը դրոշմած է ամէն արարածներու վրայ։

Նորին բարձրութեան հասակն ըսած մեծութեամբս ըլլալ է՝ քանդակագործներն ու նկարիչներն անշուշտ կը խոստովանին որ անոր մէջքը հարկաւ յիսուն հաղար ոտք շրջապատ մ՚ունենալու է, որով խիստ սիրուն համեմատութիւն կ՚առնու։

Իսկ ունեցած կիրթ ու վարժ հանճարը տեսնուած բան չէ։ Շատ գիտէ և շատ մը բաներ հնարած է։ Դեռ երկու հարիւր յիսուն տարու չկար, երբոր ըստ սովորութեան, իր մոլորակին Ճիզվիդական գպրոցն ուսանող պարապելու ատեն, մարդին զօրութեամբը՝ Եւկղլիդէսի խնդիրներէն յիսունի չափ ինքն իր գլխուն լուծեց. ըսել է թէ Պէպ – Բասդալին լուծածներէն տասն և ութ հատ աւելի։ Վասն զի Բասդալ՝ ինչպէս քոյրը կը պատմէ, խաղալու ատեն երսուն երկու հատ լուծելէ ետև՝ խիստ միջակ երկրաչափ ու անշահ դերբնագէտ մ՚եղաւ։ Երբոր Միքրօ–Մեղաս չորս հարիւր յիսուն երրորդ տարիքին մէջ էր և մանկութենէն նոր կ՚ելնէր, հաղիւ հարիւր ոտք տրամագիծ ունեցող և հասարակ գիտակէ անտես շատ մը մանր մունր միջամներ յօշոտեց, և զանոնք զննելէն ետև՝ անոնց վրայ կարի հետաքրքրական գիրք մը հանեց. բայց իրեն գլխուն լ՚ինչ մեծ ձիւն բերաւ։ Իր հայրենեացը դենպետան՝ որ չափէ դուրս բծախնդիր և տգէտ մարդ մ՚էր, այն գրքոյկին մէջ երկրկիր, չարաշունչ, խիստ, հերձամիտ և վատ առաջարկուութիւններ գտաւ; ուստի հեղինակը չարաչար հալածեց։ Իսկ դիրն այս էր թէ արդեօք Սիրիոսի լուսերուն գոյական նիւթը համազո՞ է խղունջայ նիւթին հետ։ Միքրօ–Մեղաս ինքզինքն ուշնութեամբ պաշտպանեց, երկրին կիներն իր կողմը որսայ և դարձեալ դատն երկու հարիւր քսան տարի տևեց։

Միքրօ–Մեղաս բնաւ հոգ չընար արքունական պալատէն պատուրուիլն; ուր աղմուկ, վէճ ու վատութիւն պակաս չէին։ Մինակ դենպետին դէմ ծաղրաշարժ երգ մը շինեց և ան ալ ատոր երգը բանի տեղ չդրաւ։ Յետոյ սկսաւ մոլորակէ մոլորակ ճամբորդութիւն ընել, որպէս զի, ինչպէս որ կ՚ըսուի, սիրան ու միտքը զարգացնէ։

Բայց կառքով կամ դեսպակով ճամբայ ընողները պիտի զարմանան անշուշտ երբոր վերի աշխարհը գործածուած կամ կարասին տեսնեն։ Վասն զի մենք մեր կլորիկ ագմ կոյտին վրայ, մեր սովորութենէն զատ բան մը չենք կրնար երևակայել։ Իսկ մեր ճանապարհորդը քաջ տեղեակ էր այլ և այլ վանիչ ու ձգիչ զօրութիւններուն, և ուզած ատենն այնպէս աղէկ իր գործին կը յարմարցնէր զանոնք, որ մերթ արևուն նշոյլը՝ և մերթ միտակ մոլորակ մը բաւական էր իրեն գնտէ գունտ պտոյտ ընելու թռչնի նման, որ ոստէ ոստ կ՚ոստնու։ Միքրօ–Մեղաս քիչ ժամանակի մէջ բոլոր Յարդդողի–ծիրը ժուռ եկաւ, ուստի հարկ է հոս ըսել, որ իր անցած աստեղազարդ ճանբուն վրայ բնաւ աչքին չզարկաւ այն հրեղէն նշուլագեղ երկինքը, զոր Տէրհամ* անուանի աթոռակալը՝ գիտակին ծայրոյ տեսած ըլլալուն կը գովուի։ Զեմ ըսեր թէ Պ. Տէրհամ ծուռ է տեսեր. քաւ լեցի. հապա Միքրօ–Մեղաս նոյն տեղերը գտնուեր, և անանկ

* Գիտնական անգղիացի մ՚էր որ քանի մը գրուածներ շինած ունի Աստուծոյ գոյութիւնը ցուցնելու, բնութեան հրաշալիքը մանր քննելով։

բաներ դիտող ու քննող անձ մ'էր։ Բայց նորէն կ'ըսեմ, ես մէկու մը դէմ խօսիլ չեմ սիրեր։ Միքրօ-Մեղաս շատ մը դառնալէն ետև եկաւ հասաւ Երևակին գունտը։ Թէև նորանոր բաներ տեսնելու վարժեր էր. բայց երբ այն պզտիկ գունտնև անոր մանրիկ բնակիչները դիտեց, ինքզինք մէկէն չկրցաւ զսպել. և անանկ խնդաց եկաւ որ մեծամեծներու յատուկ է. ու երբեմն էն խելացին ևս կը բռնէ։ Վասն զի Երևակը հազիւ թէ ինն հարիւր անգամ երկրէս մեծ է և Երևակցիք դաճաճ կը սեպուին. ըստ որում հազար կանգուն չափ բարձրութիւն ունին։ Առեն մը Միքրօ-Մեղաս իր սպասաւորներուն հետ անոնց վրայ ծիծաղեցաւ, դրեթէ նոյն կերպով, ինչպէս երբ իտալացի երաժիշտ մը Գաղղիա գալով Լուլիին երաժշտութեան վրայ ծիծաղի։ Բայց որովհետև Սիրիացին մտախոհ մարդ մ'էր, շուտ մը մտածեց որ խոհուն էակ մը ինչո՞ւ ծիծաղելի համարուի վեց հազար ոտք երկայնութիւն չունենալուն համար։ Ուստի Երևակցւոյ հետ մտերմացաւ և զամէնքը հիացուց։ Մանաւանդ Ճեմարանին քարտուղարին հետ սերտ բարեկամութիւն կապեց։

Ասի Ճարտար և ուշիմ մարդ մ'էր, ու թէ և Ճշմարիտն ըսելով բան մը հնարած չունէր, սակայն ուրիշներուն գըտածին վրայ Ճշդիւտ տեղեկութիւն կուտար. և ըստ կարի փոքրիկ տաղեր և մեծամեծ հաշիւներ կ'ընէր։ Հոս ընթերցողներուն հետաքրքրութիւնը գոհ ընելու մտոք օր մը Միքրօ-Մեղասին և քարտուղարին մէջ անցած հիանալի խօսակցութիւնը մէջ բերեմ։

ԳԼՈՒԽ Բ.

Սիրիացին և Երևակցին խօսակցութիւնը

ԵՐԲՈՐ նորին վսեմութիւնը դէպ 'ի դետին երկնցաւ և

քարտուղարը հուպ ընդ հուպ անոր երեսը դտաւ, պէտք է խոստովանիլ, ըսաւ Միքրօ-Մեղաս, որ բնութիւնը խիստ փոփոխական է։

—Այո՛, պատասխանեց Երևակցին, բնութիւնը բուրաստանի մը կը նմանի՝ որուն ծաղիկներն...։

—Է՛հ, ըսաւ փիւսը, թող սա քու բուրաստանդ։

—Ցերաւի, վրայ բերաւ քարտուղարը, այն խարդեաշ ու թխադոյն գեղեցիկ օրիորդներուն պարուն նման է, որոց գարդը...։

—Բայց ի՞նչ ընեմ քու թխերեսներդ, յարեց Միքրօ-Մեղաս։

—Ուրեմն նկարներու հանդիսարան մ'էլ որոց գծագրութիւնը...։

—Է՛հ դուն ալ, պատասխանեց ուղղոր Սիրիացին, նորէն կը կրկնեմ, բնութիւնը զուտ բնութիւն է, ինչո՞ւ համար բաղդատութիւն կը փնտռես։

—Քեզ հաճոյ ըլլալու համար, ըսաւ քարտուղարը։

—Հոգ չէ, չեմ ուզեր որ ինձի բան սորվեցնես։ Ուստի նախ ըսէ թէ ձեր աշխարհին մարդիկը քանի՞ զգայարանք ունին։

—Եօթանասուն և երկու հատ, ըսաւ ատենագիրը, և դարձեալ կը դանդատինք որ քիչ են։ Մեր երևակայութիւնը մեր պիտոյիցը սահմանէն դուրս կը թռի, ու կը նայինք որ մեր եօթանասուն և երկու զգայարանքով, մեր մանեակովն ու հինգ լուսնով դարձեալ սահմանաւոր էակներ ենք. թէև հետաքրքրութիւն և անբաւ կիրք ունինք, սակայն նորէն տաղտկալի ժամեր կ'անցնենք։

—Անտարակոյս այնպէս է, պատասխանեց Միքրօ-Մեղաս, վասն զի մեր աշխարհը գրեթէ հազար զգայարանք ունինք՝ և դարձեալ անորոշ իդձ մը, տեսակ մը անձկութիւն զմեզ

կը մաշէ ու անդադար կը յայտնէ որ շատ փոքրիկ բաներ ենք, և մեզնէ եւելի կատարուն էակներ կան։ Քիչ շատ ճամբորդութիւն ըրած եմ. մեզնէ դեր 'ի վեր մարդիկ տեսայ, սակայն չտեսայ մարդ մ'որ իսկական պիտոյքէն աւելի տենչ և գոհութիւնէ աւելի ևս պիտոյք չունենայ։ Թերևս օրին մէկը պիտի երթամ մտնեմ այն աշխարհն ուր ամէն բան անպակաս է։ Բայց մինչև այս օրս դեռ մարդ մը այն երկրին վրայ ճշգրիտ տեղեկութիւն տուած չունի։ Ան ատեն Երևակցին և Սիրիացին զանազան ենթադրութիւններու մէջ ընկան։ Սակայն շատ մ'ուշիմ և անհիմն դիտողութիւններ ընելէ ետև, հարկ եղաւ ճշմարտին և իրականին գալ։

— Ո՞ւրչափ ատեն կ'ապրիք, հարցուց Սիրիացին։

— Ո՛հ, շատ քիչ պատասխանեց Երևակցին մարդը։

— Մենք ալ նոյնպէս, վրայ բերաւ Սիրիացին։ Միշտ քիչին վրայ տրտունջ կրնենք։ Կարծես թէ այս բանս բնական և ընդհանուր կանոն մ'է։

— Ափսո՛ս, ըսաւ Երևակցին, մինակ արեգական հինգ հարիւր մեծ շրջաններու միջոցին չափ կ'ապրինք (որ ըսել է տասն հինգ հազար տարի, կամ ասոր մօտ բան մը, մեր կերպով հաշուելով). կը նայիս որ գրեթէ մարդ ծնելուն պէս կը մեռնի։ Այո՛, այո՛, մեր կեանքը կէտ մը, մեր տևողութիւնը վայրկեան մը, մեր երկրագունտը հիւլէ մ'է։ Հաղիւ թէ քիչ մը կրթուելու կ'սկսինք և ահա մահը շուտ մը կը հասնի, դեռ քայլ մը չ'առած. իսկ ես բնաւ չեմ համարձակիր խորհուրդներ երկնելու, զի լայնատարը և անհուն օվկիանոսի մը մէջ կաթիլ մը ջուր կը համարիմ, մանաւանդ թէ ամօթասարտ եմ քու առջևդ այս աշխարհիս մէջ իմ ծիծաղելի փոքրկութեանս։

Միքրո-Մեգաս ոչոր պատասխանեց։

— Դուն բանասէր ես, չես վշտանար եթէ բայէ 'ի բայ յայտնեմ քեզ որ մեր կեանքը քան ձերինն եօթ հարիւր անգամ երկարատև է, սակայն քաջ գիտես որ երբ մարմինը հող դառնայ և վերջը բնութեան մէջ վերածնի, այսինքն մեռնի. երբոր կ'ըսեմ, այս այլափոխութեան ժամը հասնի, թէ յաւիտենականութեան չափ ապրիս և թէ օր մը, իսկ և իսկ նոյնն ըսել է։ Ամպոսի երկիրներ դտնուած եմ, ուր մարդիկ մեզնէ հազարապատիկ աւելի կ'ապրին և հոն ալ տրտունջ կը բերին։ Բայց ամէն ուրեք կան նաև մարդիկ, որ իրենց բանը գիտեն և բնութեան Արարիչը կը գովաբանեն։

Թէ և նա տիեզերքայ մէջ տեսակ տեսակ անհամար էակներ ստեղծած և տարածած է, սակայն զարմանալի ներդաշնակութիւն մ'անոնց մէջ կը տիրէ։ Օրինակի համար, ամէն խոհուն էակներ տարբեր են, և իրաք ամէն ալ առ հասարակ խելքի և ըղձի կողմանէ իրարու կընմանին։ Նիւթն ամէն տեղ տարածուն է, բայց զատ զատ դունտերու մէջ կերպ կերպ յատկութիւններ ունի։ Ձեր դունտը քանի՞ տեսակ յատկութիւններ ունի։

— Թէ որ մեր գնտին գոյարար և իրական յատկութիւնները կուզես, ըսաւ Երևակցին, իրեք հարիւրի չափ կը համրենք. ինչպէս տարածութիւն, ձգողութիւն, բաժանականութիւն, ընդդիմահարութիւն, շարժականութիւն և այլն։

— Կարծեմ թէ պատասխանեց ուղևորը, այս պզտիկ թիւը բաւական սեպած է Արարիչը ձեր պզտիկ բնակարանին վրայ ունեցած խորհրդոյ նկատմամբ։ Ամէն բանի մէջ իր խնայողութեան վրայ կ'սքանչանամ։ Իրաւ, ամէն տեղ զանազանութիւնը տեսանելի է, բայց համեմատութիւնն ալ անոր զուգակից։ Ձեր դունտը փոքր է, նոյնպէս են նաև իր բնակիչները։

քիչ զգայում ունիք, ձեր նիւթիւն յատկութիւններն ալ քիչ են. և այս ամէն կարգը Նախախնամութեան գործն է։ Ի՞նչ գոյն ունի ձեր արևը, երբ աղէկ մը քննէք։

— Դեղընկեկ ճերմակ է, պատասխանեց Երևակցին, ու երբոր անոր նշոյլը բաժնենք, կը նայինք որ եօթ գոյն ունի։

— Մեր արևը կարմրի կը զարնէ, ըսաւ Սիրիացին, ու երեսուն և ինն նախնական գոյներ ունի։ Ցեսած արևներէս և ոչ մէկը ուրիշն մը համադոյն է. ինչպէս որ ձեր մէջ դէմք մը չկայ որ իրեն նմանը գտնէ։

Միքրօ-Մեղաս այսպէս տեսակ տեսակ խնդիրներ ընելէն ետև՝ հարցուց նաև թէ զլխաւոր քանի կերպ գոյակ կը գըտնուի Երևակին մէջ։ Խմացաւ որ երեսնի չափ կ'ելնէ, ինչպէս Աստուած, անջրպետ, հիւղ, զգայուն, խոհուն և տարբերեղէն էակներ, մտաւոր իսկ անտարը արարածներ, թափանցելի և անթափանց նիւթեր և այլն։ Երևակցին ապշեցաւ մնաց երբոր լսեց որ Սիրիացիին աշխարհն ալ գոյակներն երեք հարիւրի կը հասնին, բայց 'ի սն երեք հազարէն որ իր ճամբորդութեան ատեն գտած և ընդած էր։ Վերջապէս իրենց գոյն գիտցածը և շատ մ'ալ չգիտցածը իրարու հաղորդելէ ու գրեթէ արևուն մէկ շրջանին չափ ատեն խորհրդակցելէ ետև, որոշեցին որ 'ի միասին խմաստասիրական ճամբորդութիւն մ'ընեն։

ԳԼՈՒԽ Գ.

Սերբոի Բնակչին և Երևակցին խօսակցութիւնը

Մեր երկու խմաստասէրներն Երևակին մթնոլորտին մէջ մտնելով ճամբայ ելնելու վրայ էին չափաբերական առաստպաշարով մը, երբոր Երևակցին սիրուհին, որ իմացեր էր

անոնց պատրաստութիւնն, իսկոյն եկաւ լալով՝ բերնէն եկած տրտունջն իր տարփաւորին թափելու։ Ասի թխերես սիրուն կին մ'էր՝ որ հազիւ վեց հարիւր վաթսուն կանգուն երկայնութիւն ունէր, բայց ուրիշ այլ և այլ շնորհքովը հասակին կարճութիւնը կը զոյգէր։

— Ո՞հ, անօրէն, գոչեց երեսին, հազար հարիւր տարի քու հրապուրանացդ դէմ կենալէ ետև, երբոր անձնատուր ըլլալու վրայ էի, և հազիւ թէ հարիւր տարի քու գիրկդ անցուցի, և ահա զիս երեսի վրայ կը թողուս օտար աշխարհի հսկայի մը հետ ճամբորդութիւն ընելու մտօք։ Գնա՛, կորի՛ր, դուն ապաշնորհ հետաքրքիր մ'ես եղեր, և սէր ըսուած բանին նշոյլն անգամ չես ունեցեր։ Թէ որ Ճշմարիտ Երևակցի ըլլայիր, ինձի միշտ հաւատարիմ կը մնայիր։ Ցանկարծ ո՞ւր կը թողուս մեզ ու կերթաս. հո՞գդ է հատեր, ի՞նչ է փնտռածդ։ Մեր հինգ լուսինները քեզի չափ գիր բաշարժ ու անկայուն չեն, և ոչ մեր մանեակն այդքան փոփոխական։ Այսուհետև ամէն բան լմնցաւ, ուրիշ մը սիրելիք չունիմ։

Խմաստասէրը գրկեց կինը, լացաւ անոր հետ, թէ և խմաստասէր պիտի ըլլար, և տիկինն ատեն մը մարմրած մնալէն ետև՝ գնաց ուրիշ թռուցիկ պարոնի մը հետ քիչ մը մխիթարութիւն գտնելու։

Ան ատեն մեր երկու հետաքրքիրները ճամբայ ելան։ Նախ Երևակին մանեակին վրայ ցատկեցին, որ բաւական տափարակ էր, ինչպէս որ մեր փոքրիկ հողագնտին ընդիկներէն մէկը գուշակեց, յետոյ լուսնէ լուսին կը սահէին կ'անցնէին։ Նոյն պահուն անգիէն մոլորակ մը կը սլանար կ'գար. իսկոյն հոն գիմեցին՝ տէր ու սպասաւոր՝ իրենց գործիներով։ Երբոր հարիւր յիսուն մղոնի չափ տեղ քալեցին, Լուսնթագին արբ-

քանեակներուն հանդիպեցան. ուստի նոյն իսկ Լուսնթագին վրայ դադար առին։ Հոն մէկ տարի կենալով շատ օգտակար դաղափարներ ուսան, զոր մինչև հիմակ տպուած կը տեսնէինք՝ թէ որ անդամ մը հաւատաքննիչներն աշխարհէս բնաջինջ ըլլային։ Ինչու որ անոնց մէջի քանի մը իմաստներն իրենց քիչ մը ծանրկեկ երևցեր են։ Սակայն անուանի... դերասպայծառին քով բնագիրը տեսայ և սիրով ու գովելի յօժարամտութեամբ թողուց որ կարդամ։

Բայց մենք մեր Ճամբորդներուն դանը։ Լուսնթագէն մեկնելով գրեթէ հարիւր մղոնի անջրպետէ մ՚անցան և Հրատ մղորակին չորս դին քերեցին, որ ինչպէս յայտնի է, մեր փոքրիկ գնացէն եօթն անդամ պզտիկ է։ Երկու լուսին տեսան որ նոյն մղորակին արբանեակներն էին, և որոնք դեռ մեր աստղաբաշխներուն աչքին չեն հանդիպած։ Քաջ գիտեմ որ Հայր Քաստէլ այն երկու լուսիններուն գոյութեանը դէմ ծաղրելով պիտի գրէ, սակայն ես նմանութեամբ դատողներուն կարծիքը կը բռնեմ։ Ան բարեմիտ իմաստասէրները գիտեն թէ ո՛րչափ անհնար բան է որ Հրատն Արևէն այնքան հեռու գտնուելով երկու լուսնի կարօտ չէրլայ։ Ինչ և է, մեր ուղևորներուն աչքը աս մղորակը չբռնեց և վախցան որ հոն պառկելու տեղ չեն գտներ։ Ուստի Ճամբանին շարունակեցին՝ իբր երկու ուղեկից՝ որ գիւղի մը անպիտան օթևանը բանի տեղ չդնելով մինչև մօտակայ քաղաքը Ճամբանին յառաջ կը քշեն։ Սակայն երկուքնին ալ վերջը զղջացին իրենց ըրածին վրայ. վասն զի երկար ատեն ժուռ եկան և իրի մը չհանդիպեցան։ Վերջապէս հեռուէն աղոր լոյս մը տեսան, այն էր երկիրս։ Լուսնթագէն եկողներուն աչքին ինչ մանր և գծուծ կ՚երևի աս արբանեակս։

Բայց նորէն չզղջալու համար՝ հոս դադարելու յանձն առին։ Նախ գիսաւորին պոչը իջան, և եռքը կաղմ և պատրաստ հիւսիսայգ մը գտնելով մէջը անցան և Պալթիկ ծովուն հիւսիսային եզրն օթևան առին 1737 յուլիս 3ին, ըստ նոր տումարի։

ԳԼՈՒԽ Դ։

Սերիոն Բնակչն և Երևակոյին հոլանդերէն վրայ պատմածը

Մեր ուղեկիցներն ատեն մը Պալթիկ ծովուն հիւսիսային եզերքը հանդչելէն ետև, իբր նախաճաշիկ, երկու կոկիկ ու մաքուր լեռ կերան սպասաւորներուն ձեռօք պատրաստուած։ Եռքը եկան քաղաքը գնելու։ Նախ հիւսիսէն հարաւ գացին։ Սիրիացիին և իրենցներուն հասարակ քայլափոխն երսուն հազար ոտնաչափ էր։ Երևակոյին հեռուէն հեւալով անոնց ետևէն կը վազէր. ինչու որ ինքը տասներկու քայլաչափ ընելու ատեն, միւսը մէկէն մէկ քայլափոխ կ՚առնուր։ Աչքիդ առջև բեր անդամ մը (եթէ ներելի է այսպիսի բաղատատութիւններ ընել) խիստ փոքրիկ շնիկ մ՚որ իբր թէ Բրուսիոյ թագաւորին հսկայ գնտապետի մը ետևէն կ՚երթայ։

Որովհետև աս օտարականները շուտ շուտ կը քալեն, երկրիս շրջանը երսուն վեց ժամու մէջ կրնային ընել, թէ և արևը՝ կամ լաւ ևս ըսեմ, երկիրս նոյն պտոյտը մէկ աւուր մէջ կ՚ընէ։ Բայց այս ևս դիտելու է որ աւելի դիւրին է իր առանցքին վրայ դառնալ՝ քան թէ ոտքով շրջել։ Շատ չանցաւ և ահա նորէն իրենց եկած տեղը դարձան. և հաղիւ տեսան ամենամանր ծովակն որ Մինջերկրական կը կոչուի, և միւս

փոքրիկ ըմբոն՝ որ մեծ Ովկիանոս անուն ունի, և կը պատռէ մեր խլուրդներուն բլրակը։ Երբոր անոր մէջ մտան, ջուրը հաղիւ թէ գաղշապարանին կը թրջէր։ Ադիս անդին շրջելով ամէն ճիգ 'ի գործ դրին որ հասկընան թէ աս գունտս մարդաբնակ է թէ անբնակ։ Բայց աւելի աղէկ դիտելու համար ծուեցան, երկնցան, ձեռօք շոշափեցին, իսկ կերպով մը աչքերնին ու ձեռքերնին հոս վարը սողացող պզտի արարածներուն հետ համեմատութիւն չունենալով բան մը չկրցան զգալ, և գտնէ կասկածիլ որ մենք և մեր միս բնակիչ եղբայրները պատիւ ունինք ապրելու այս աշխարհիս վրայ։

Գամաճն, որ ամէն բան շուտով կը կարդէր կը թափէր, վճռեց նախ՝ որ երկրիս վրայ մարդու ձայն ձիւն չկայ։ Այս բանիս առաջին պատճառ կը համարէր հոն մարդ չտեսնելը։ Միքրօ-Մեղաս անոր քաղաքավար կերպով մը հասկրցուց որ շատ ծուռ տրամաբան է, և ըսաւ։

— «Ի՞նչ ըսել է, երբոր քու մանր աչքերդ յիսուններրորդ մեծութեամբ շատ մը մոլորակներ չեն կրնար տեսնել, մինչդեռ իմիններս յստակ կը տեսնեն, կրնա՞ս հետևցունել թէ ան մոլորակները չկան։

— Բայց, ըսաւ գամաճը, շատ լա՛ւ շոշափեցի։

— Բայց, պատասխանեց միւսը, շատ զէ՛շ զգացիր։

— Բայց, ըսաւ գամաճն, այս գունտս այնչափ զէշ շինուած է, այնչափ անկանոն և ծաղրելի ձև մ'ունի, որ կարծես թէ ամէն բան խառն ու շփոթ է հոն։ Միթէ կը տեսնե՞ս աս պզտիկ վտակներն՝ որ ոչ բոլորակ, ոչ քառակուսի, ոչ ձուաձև և ոչ որ և է կանոնաւոր գիրք մ'ունին։ Նոյնպէս նայէ գնտիս վրայ ասդիս անդին ձիգ ձիգ կեցած ու սրածայր հատիկները՝ որ ոտքս արիւնեցին, (լեռները նշանակել կուզէր)։ Դիտէ անդամ մի բոլոր գնտիս ձևը, ի՞նչպէս բևեռ-

դերուն կողմը տափակ է։ ի՞նչպէս արևուն չորս դին ծուռ ծուռ կը պտրտի, ուստի և բևեռային երկիրներն անդործ և խոպան կը մնան։ Ճշմարիտը կուզե՞ս թէ ի՞նչու համար այս տեղ մարդ չընակիր կ'ըսեմ, վասն զի չեմ կարծեր որ խելքով շնորհքով մարդիկ այս տեղ բնակիլ ուզեն։

— Լաւ ուրեմն, ըսաւ Միքրօ-Մեղաս, ուսկի՞ց դիտես որ այս տեղ բնակիչներն ալ խելագար չեն։ Բայց վերջապէս՝ բատ երևոյթին՝ այս գունտս ինքն իր գլխուն գառնալու համար շինուած պիտի չըլլայ։ Դուն կ'ըսես թէ հոս ամէն բան քեզի անկանոն կ'երևի, վասն զի ամէն բան Երևակին և Լուսնթագին մէջ կարկինով չափուած է։ Է՛հ, թերևս այսպէս ըլլալուն է որ հոս ալ քիչ մը խառնակութիւն կը տեսնուի։ Միթէ քեզի չըսի՞ որ իմ ճամբորդութիւններուս մէջ միշտ պլակերպութիւն գտած եմ։

Երևակցին այս ամէն պատճառներուն պատասխան հասուց, ու գուցէ այս վիճաբանութիւնը լմննալիք չունէր, թէ որ Միքրօ-Մեղաս խօսելու ատեն չփրփրար և բարեբաղդաբար ականակուս մանեակին թելը չկտրէր։ Անդամանդները գետին թափեցան։ Ասոնք մանր մունր անհաւասար քարեր էին՝ որոցմէ ամէնէ խոշորը չորս հարիւր լիպրէ և փոքրագոյնը յիսուն լիպրէ կը կշռէր։ Գամաճը մէկ քանի հատ գետնէն ժողվեց և իր աչքին մօտեցնելով տեսաւ որ այս աղամանդները՝ կարուած կերպովին պատուական խոշորագոյններ են։ Ուստի հարիւր վեցտասն ոտք տրամագիծ ունեցող փոքր դիտակ մ'առաւ ձեռքը՝ և իր բբին մօտեցուց։ Միքրօ-Մեղաս ալ երկու հազար հինգ հարիւր ոտք տրամագիծ ունեցող մ'ընտրեց։ Երկուքն ալ սքանչելի էին։ Բայց նախ և ոչ բան մը տեսնելու զօրեցին։ Նորէն յարմարցուց աչքին և վերջապէս Երևակցին խիստ մանր բան

մը տեսաւ որ Պալթիկ ծովուն մէջ, ջրին երեսը կը շարժէր։ Այս սև կէտ մ՚էր. պզտիկ մատովը վարպետութեամբ մ՚առաւ և բթամատին ըղուղին վրայ կեցնելով Սիբիրացիին ցցուց։ Ան ալ սկսաւ նորէն ծիծաղիլ մեր երկրագնտին բնակիչներուն նիհարութեան վրայ։ Երևակցին այս առթիւ համոզուելով որ մեր գունտն անբնակ չէր, մէկէն վճռեց որ բնակիչները մինակ ծովու կէտերէ կը բաղկանան։ Եւ ըստ որում. քաջ տրամաբան էր, փորձ փորձեց իմանալու թէ ուսկից այսպիսի փոքրիկ հիւլէ մ՚իր շարժումը կ՚ընդունէր և արդեօք գաղափար, կամք և ազատութիւն ունի։ Միքրո-Մեղաս սկսաւ տագնապիլ այս խնդրոյս վրայ։ Ուստի մեծ համբերութեամբ կենդանին քննեց, զննեց և իր հետազօտութենէն հետևանք հանեց թէ՝ կարելի չէ հաւատալ որ անոր մէջ հոգի գտնուի։ Երբոր մեր ճանապարհորդները միաբան կը մտածէին որ բնաւ հոգի պիտի չըլլայ երկրիս վրայ, յանկարծ դիտակին միջոցաւ կեսէն աւելի խոշոր բան մը տեսան որ Պալթիկ ծովուն երեսը կը ծփար։ Ամենուն յայտնի է որ նոյն միջոցին փիլիսոփաներու երամ մը բևեռային շրջանակէն կ՚իջնէին։ Հոն դացեր էին քանի մը զննութիւններ ընելու, թէ և այս բանս մինչև ան ատեն մէկուն միտքէն ալ անցած չէր։ Լրագրներն ըսին թէ նաւը Պոռնիոյ ծովեղերքը խրեցաւ մնաց և թէ փիլիսոփաները մեծամեծ դժուարութեամբ այն վտանգէն ազատեր են։ Սակայն այս աշխարհիս մէջ աշխարհացոյցներուն տակին ոչ ոք կրնայ իմանալ։ Հիմայ պարզօրէն պիտի պատմեմ թէ ինչ անցքեր անցան այն տեղ, առանց իմ քովէս բան մ՚աւելցնելու, թէ և այս թեթև գործը չէ պատմագրի մը համար։

ԳԼՈՒԽ Ե.

Երկու-ուղևորներու փոքրիկները

Միքրո-Մեղաս կամացուկ մը ձեռքը դէպ՚ի Պալթիկ ծովուն երեսը տատանող առարկային եղած տեղը տարաւ, երկու մատերը երկնցուց և չվրիպելու վախով քաշեց։ Այս անգամ Ճարպիկութեամբ փիլիսոփաները կրող նաւը բռնեց և եղունգին վրայ կեցուց՝ առանց շատ սեղմելու որ չըլլայ թէ ձեռքին մէջ փշրի։

— Ահաւասիկ առաջինէն շատ տարբեր կենդանի մը, ըսաւ Երևակցի գաճաճը։

Ան ատեն Սիբիրացին կարծեցեալ կենդանին ափին մէջ դրաւ։ Նաւուն մէջ եղողները՝ Ճամբարդ ու նաւաստի, կարծելով թէ թաթառը նաւը դէպ՚ի վեր կը հանէ և ապառաժի մը գլուխը կըդնէ, իսկոյն իրար կ՚անցնին։ Նաւաստիները դինիի տակառներ կ՚առնուն և Միքրո-Մեղասին ձեռքին վրայ նետելով իրենք ալ անոնց ետևէն կը նետուին։ Իսկ երկրաչափներն ամէն մէկն իրեն քառորդ շրջանակին հատածը և ուրիշ այլ և այլ գործիներ կ՚առնու, և ամէնքը Սիբիրացիին մատերուն վրայ կ՚իջնեն։ Վերջապէս այնչափ կ՚երերան ու կ՚նփին որ Սիբիրացին կ՚զգայ թէ մատերուն վրայ բան մը կը շարժի և կը խայթէ։ Եւ իրօք ալ երկաթէ գաւազան մը ոտքով անոր բթամատին մէջ կը մխէին։ Այս խայթուածքէն խելքը հասաւ որ բռնած կենդանիին մէջէն բան մը ելած է. բայց նոյն միջոցին ուրիշ կասկածի մը չդնաց։ Խոշորացոյցն որ հաղիւ թէ կէտ մը նաւէ կարող էր զանազանել, մարդուն պէս անտեսանելի էակ մը չէր կրնար դիտել։ Հոս բնաւ մէկու մը մտափառութիւնը խոցել չէ միտքս, սա-

կայն ստիպուած եմ աղաչելու մեծամիտներն որ ինձի հետ կարճ դիտողութիւն մ՚ընեն։ Մարդուս հասակը դրեթէ հինգ ոտնաչափ դնելով երկրիս վրայ այնչափ տեղ կը բռնենք՝ որչափ որ բթամատի մը վեց հարիւր հազարերորդ մաս մեծութեամբ կենդանի մը տաս ոտք կլորութեամբ գնդակի մը վրայ կը բռնէ։ Ենթադրէ այնպիսի էակ մ՚որ ափին մէջ երկիրս ամփոփելու կարող ըլլայ և իր զգայարանները մերինին համեմատ կերպով ըլլան, հաւանական է որ այսպիսի էակներ գտնուին. արդ խնդրեմ ենթադրէ, թէ ինչ պիտի մտածեն անոնք այն պատերազմներուն վրան որ կ՚ընեն երկու գեղ նուաճելու համար, որպէս զի նորէն եւ դարձնենք*։

Անտարակոյս եմ որ եթէ բարձրահասակ գնդապետ մը պատահմամբ այս գիրքս կարդայ, իր գնդին զլխաւորները գոնէ երկու ոտնաչափ բարձր շինել կուտայ։ Բայց իրեն կ՚իմացնեմ որ՝ի զուր բարձրանալու կը ճգնի, վասն զի թէ ինքը և թէ մարդիկ ինչ որ ընեն՝ դարձեալ ամենամանր էակներ կը սեպուին։

Ուրեմն ի՞նչ հրաշալի ճարտարութիւն պէտք էր որ մեր Եւրեւակցի խմաստասէրն ան հիւլէները դիտելու կարող ըլլայ։ Երբոր Լէվէնհոէ և Հարթսոէքր նախ տեսան, կամ տեսնել կարծեցին, այն հունտն ուստի շինուած ենք, դրեթէ ասկէ աւելի մեծ դիւտ մ՚բրած չեղան։ Ի՞նչ խնդութիւն զգայ Միքրոմեղաս երբոր այն փոքրիկ մեքենաներուն շարժիլը դիտեց, անոնց ձեւը քննեց ու այլ և այլ գործողութիւններն տեսաւ։ Ի՞նչ ձայն ձգեց, ինչպէս ցնծութեամբ իր ուղեկցին ձեռքը տուաւ դիտակներէն մէկը որ նա՝ալ դիտէ։

— Ահա աչքիս առջեւն են, կ՚ըսէին միաբերան, ահա բեռ կը կրեն, կը ծռին, կը կանգնին։ Այս ըսելով իրենց ձեռքը

* Հոս Լուի ԺԳ. Գաղղիոյ թագաւորին ըրած ճախորդ պատերազմերուն կ՚ակնարկէ հեղինակը։

դիզուց, վասն զի ուրախ էին նոր նոր էակներ տեսնելու և աչքէ կորսնցնելու կը վախնային։ Իսկ Երեւակցին յանկարծ դիւրահաւատութիւնը բռնեց, ինքն որ չափազանց կասկածոտ էր, և կարծեց կամ աչքին այնպէս մը գալու որ վարի մարդիկ բազմանալու կաշխատին։

— Վայ, ըսաւ, բնութիւնն իր գործին վրայ բռնեցի։ Սակայն երեւոյթը զինքը կը խաբէր, և այս բանս ստէպ կը պատահի, թէ դիտակ գործածես և թէ չգործածես։

ԳԼՈՒԽ Զ.

Մարդկանէրուն հետ ինչ ըրին

Միքրոմեղաս՝ որ իր դաճաճէն գերազանց գնչիչ մը էր, ակն յայտնի տեսաւ որ հիւլէները կը խօսակցին։ Այս բանս իր ընկերին ալ դիտել տուաւ, բայց անոր որ արդէն ամօթով էր միակցութեան մասին, չուզեց հաւատալ որ այնպիսի չնչին էակներ իրարու գաղտիար հաղորդելու կարող ըլլան։ Թէ և ինքն ալ Սիրիացիին պէս լեզուագէտ էր, սակայն մեր հիւլէներուն խօսքը չլսելուն կը կարծէր որ խօսիլ չգիտեն։ Ասկէ զատ, միթէ կարելի բա՞ն է որ սա աննշմարելի էակները ձայնի գործարաններ ունենան, և միտքը բացատրեն։ Խօսելու համար խորհիլ պէտք է, կամ ասոր մօտ բան մը, իսկ թէ որ խորհին, ըսել է թէ հոգւոյ նման բան մ՚ունին։ Արդ սա տեսակ կենդանիներուն հոգի մ՚ընծայելն իրեն անմտութիւն կ՚երեւէր։

— Բայց, ըսաւ, Սիրիացիին՝ քիչ մ՚առաջ ըսիր թէ սիրով զբաղած են. միթէ կարծես թէ հնարաւոր է սէր ընել առանց խորհելու և բան մը հնչելու, կամ գէթ նշա-

նով մ՚իրարու միտքը խնայնելու։ Մինթէ կարծես թէ աւելի դժուարին է առարկութիւն մը ծնիլ քան թէ մանկիկ մը։ Եթէ ինձ հարցնես, թէ՛ մէկը և թէ մէկալը խորին գաղտնիքներ են։

— Ոչ հաւատալ կ՚ղայ և ոչ ժխտելս, վրայ բերաւ գաճառը, ու գաղափար մը չունիմ։ Նախ փորձ մը փորձենք սա միջառները զնելու ու յետոյ վէճի նստինք։

— Շատ աղէկ մտածեցիր, ըսաւ Միքրօ-Մեղաս։

Իսկոյն զոյգ մը միրուռ հանեց և եղունդները կարեց, յետոյ բթամատին եղունդին շերտն առաւ և նոյն միջոցին ահագնագոչ թմբուկ մը շինեց մեծ ձաղարի նման՝ ու անոր խողովակն ալ ջրաւ։ Ձաղարին շրջանակը թէ ծաւալ և թէ նաւաստին կը ծածկէր։ Ամէնէն մեղմ ձայնն եղունդին բոլորշի ջիզերէն կը սահէր վեր կ՚ելնէր, այնպէս որ վերի խնաստաէրն իր ճարտարութեամբը կարող եղաւ մեր վարի միջառներուն բզբզալը ճշդիւ լսելու։ Եղբը անոնց խօսքը որոշ որոշ զանազանել սկսաւ և վերջապէս գաղտնարէն լեզուն ալ լսեց։ Մեր ճանապարհորդներուն զարմանքը քանի կ՚երթար կ՚աւելնար, երբ կը տեսնէին որ մանր մանր որդեր բնական խելքով շնորհքով կը խօսին։ Բնութեան այս պանծալի խաղը իրենց համար անմեկնելի կ՚երևէր։ Ամէն մարդ կրնայ երևակայել թէ նոյն միջոցին Սիրիացին և իր ընկերն ինչպէս կը հալէին և կը մաշէին անհամբերութեամբ որ հիւլէներուն հետ խօսակցութեան բռնուին։ Գաճառը կը վախնար որ իր որոտանման ձայնին մանաւանդ՝ Միքրօ-Մեղասի ձայնին որդերը չի շրտնուն, չլսեան ու չի լսուին։ Ուստի քիչ մը զայն մեղմելու համար՝ իրենց բերնին մէջ տեսակ մ՚ակոյի վրձիններ խօթեցին, որոց սրամէտ ծայրը մինչև նաւերուն կը հասնէր։ Սիրիացին գաճառը ծունկերուն վրայ վերուցած՝ և նաւը նաւաստիներուն

հետ եղունդին վրայ, գլուխը կը ծռէր և մեղմիկ խօսելու փորձ կը փորձէր։ Վերջապէս այս զգուշութիւններն և ուրիշ ասոնց նման բաներ ընելէ ետև՝ իր ճառն այսպէս սկսաւ։

« Անտեսանելի միջառներ, ո՛րչափ շնորհապարտ եմ Ադարչին, որ զձեզ մտաղիւբ ստեղծելէն ետև՝ այսչափ փոքրիկ շրջանի մը մէջ, անհաս գաղտնիքներ ինձ յայտնելու ալ յօժար է։ Թերևս իմ պաղատիս մէջ ձեր երեսը տեսնելու անդամ չեմ յօժարիր, սակայն ուրիշն անարգելը բնութեանս մէջ չկայ և ձեզի իմ պաշտպանութիւնս կը շնորհեմ »։

Թէ որ զսքմանք ըսած բանն մարդ մը պաշարած է, ան խօսքերն ընդունելու չափ պաշարած պիտի չլլայ։ Նաւուն մէջ ինները չէին կրնար երևակայել թէ այն ձայնն ուսկէ կ՚ղայ։ Նաւուն վերակացուն սկսաւ աղօթք ընել, նաւաստին հայհոյել և փիլիսոփաներ գրիչ շարժել։ Սակայն ինչ որ ըրին՝ չկրցան հասկնալ թէ իրենց հետ խօսողն ո՞վ էր։ Երևակայի գաճառն՝ որուն ձայնն աւելի մեղմ ու դաշն էր քան Միքրօ-Մեղասինը, համառօտ մ՚իմացուց անոնց թէ ինչ տեսակ էակներու հետ գործ ունին։ Դէպ՚ի Երևակն իրենց ըրած ճամբորդութիւնը պատմեց, և ըսաւ թէ՝ ո՛վ էր Միքրօ-Մեղաս։ Քիչ մ՚ատեն անոնց պզտիկութեան վրայ ցաւակցելով, հարցուց թէ միշտ այս ողորմելի և գրեթէ չնչին վիճակին մէջ մնացած են. թէ ի՞նչ կ՚ընեն հողատեղ մը մէջ՝ որ կարծես թէ կէտերուն կայանն է, թէ երջանիկ են, թէ կը բաղմանան, թէ հոգի ունի՞ն. ու այս տեսակ այլ և այլ հարցումներ ըրաւ։

Իմաստասէրներու ակմբին էն համարձակ տրամաբանն՝ իր հոգւոյն գոյութեան վրայ եղած կասկածը չկրնալով տանիլ, քառորդ շրջանակի մը վրայ հաշուով գիտակը շակեց, խօսողը գիտեց, երկու գիրք առաւ ու երբորդին այսպէս խօսեցաւ։

« — Պարոն, ի՞նչ կարծես դուն. միթէ դլխէդ մինչև վար հազար կանդուն հասակ ունենալուդ, ինք զինքդ մէկ մեծ . . . :

— Հազա՛ր կանդուն, պոռաց գամառը, Տէր աստուած, իմ հասակս ուսկի՞ց դուռ, հազար կանդուն, կ'ըսէ, և ոչ բթամատի չափ կ'սխալի: Ի՞նչ, աս հիւլէն գիս չափե՞ց մի. արդեօք երկրաչա՞փ է, ի՞նչ է. երկայնութիւնս դուռ, և ես որ զինքը խոշորացոյցով կը դիտեմ չեմ կրնար իրենը դտնել:

— Այո՛ գքեզ չափեցի, ըսաւ բնակէտը, նաև քու հսկայաձև ընկերդ ալ չափելու կարող եմ:

Այս առաջարկութիւնը յանձն առին: Ան ատեն նորին բարձրութիւնն երկայն բարակ երկնցաւ, վասն զի թէ որ կանդուն կենար, գլուխն ամպերէն անդին պիտի անցնէր: Մեր խնամատարները մեծ ծառ մ'առին և անոր մարմնոյն վրայ այնպիսի տեղ մը տնկեցին զոր մինակ Սվիֆտ գիտնականը կ'անուանէր, բայց ես կ'զգուշանամ անոր անունը տալու, վասն զի կնիկներէն շատ կը քաշուիմ: Վերջն իրարու մէջ եռանկիւններ շինելով, իմացան որ տեսածնին գեռաբոյս պատանի մ'էր ճշտապէս հարիւր քսան հազար ոտք բարձրութեամբ:

Ան ատեն Միքրօ-Մեղաս այս խօսքերս ըսաւ:

— Հիմակ բոլորովին համոզուեցայ որ հարկ չէ ամէն բան դրսի մեծութեան նկատմամբ դատել: Ո՛վ Աստուած, դուն որ այսպիսի խեղճ ու ողորմելի երևցած էակներու բան ու միտ շնորհեր ես, ձեռքդ անհուն պզտիկն և անհուն մեծն անք խտիր կը ծաղին: Իսկ թէ որ ստուգիւ ասոնցմէ աւելի մանր էակներ կը գտնուին, թերևս գերագոյն միտք ալ ունենան, քան թէ իմ երկինքս տեսած մեծայաղթ ու գերբաստան կենդանիներն, որոց ոտքը միայն՝ իջած հողակտիս երեսը կրնայ դոցել:

Խնամատարը մ'անոր պատասխանեց, թէ ամերիկիտ կրնայ հաւատալ որ մարդէն աւելի մանր մտաւոր էակներ կան, ուստի պատմեց անոր՝ չէ թէ Վերդիլիոսի մեղուներու վրայ առասպելօրէն ըսածները, հապա ինչ որ Սոռաֆերպամ դուռ, և ի՞նչ որ Ռոմ-ը յօշոտեց և զնեց: Վերջապէս իմացուց անոր թէ մարդ մեղուներն ի՞նչ աչքով որ կը նայի, կենդանիներ կան որ մեղուներուն առջև նոյն յարգն ունին, ինչպէս որ նոյն ինք Միքրօ-Մեղաս ես իր նկարագրած մեծամեծ կենդանիներու նկատմամբ ո՛չ ինչ է: Ասոնք ալ դարձեալ ուրիշ մեծամեծ արարածներու առջև իբր փոքրիկ հիւլէներ կ'երևին: Կամաց կամաց խօսակցութիւնը տաքցաւ և Միքրօ-Մեղաս այսպէս խօսեցաւ:

ԳԼՈՒԽ Է.

Խօսակցութիւն մանրադիտակաւոր հեպ:

« Ո՛վ մտաւոր հիւլէներ, դուք որ մշտնջենաւոր էութեան մը հրաշալի ձեռակերտներն էք, և անոր ճարտարութիւնն և զօրութիւնը կը քարոզէք, անշուշտ, անուշ և զուարթախութիւն մը կը վայելէք ձեր հողակտին վրայ: Վասն զի դրեթէ անտարբ և հոգեղէն էակներ ը լլալով՝ ձեր կեանքը մինակ սիրով և մտածութեամբ կ'անցունէք: Այս է բուն իսկ հոգեղէններու ճշմարիտ կեանք: Բնաւ տեղ մ'անեղծ երջանկութիւն մը չտեսայ և հաւատի եմ որ այս տեղս պիտի գտնեմ:» Ան խօսքիս՝ բոլոր փիլիսոփաները գլուխնին օրեցին և ամենէն ազատախօսն անկեղծ սրտով իմացուց՝ որ բնակիչներուն անուշն և փոքրիկ մասէ մը զատ՝ մնացածը խենդ՝ չարաբարոյ՝ և եղկելի մարդերու ակումբ մ'է: Իսկ մեր նիւթը հարկաւորէն աւելի է, ըսաւ, միշտ չար գործելու համար, թէ որ ստուգիւ չարիքը նիւթէն յառաջ կգայ, և չափէն աւելի խելք ունինք, թէ որ չարին աղբիւրը միտքն է:

Օրինակի համար, — Գիտե՞ս արդեօք որ աս միջոցիս իսկ որ

քեզի հետ կը խօսիմ, մեր տեսակ խենդերուն մեկ մասը ուրիշ իրենց նման հարիւր հազար կենդանի կ'սպաննեն կամ կ'սպանուին, թէ զրեթէ բոլոր աշխարհիս երեսը հին ատենէ 'ի վեր աս է իրերու կարգը։ Սիրիացիին լաւը բռնեց և այնպիսի փծուն անասուններու մէջ ծագած արիւնուշտ կոխներուն պատճառը հարցուց։ Իմաստասէրը պատասխանեց։

— Քու կրոնկիդ չափ տղմի կոյտ մ'է պատճառը։ Զեմ ըսեր թէ բիւրաւոր մարդիկ՝ որ զիրար կը մորթեն այն հողի կոյտին վրայ մաղի չափ իրաւունք ունին, այլ այս է խնդիրը թէ՝ արդեօք այն սրՈու պիտի անցնի, անձի՞ մ'որ աբեայ կանուանի, թէ ուրիշ մարդու մ'որ ի՛նչ ատթիւ Նեֆաբ անուանիլը չգիտեմ։ Սակայն ոչ աս և ոչ ան տեսած՝ և երբէք տեսնելիք չունին կուսին նիւթ եղող փոքրիկ հողի մ'անկեան կտորը, և զրեթէ աս զիրար մորթող կենդանիներն ալ տեսած չունին ան կենդանին՝ որուն սիրոյն համար կը ծեծկուին ու կը փետուին։

— Վա՛յ, անօրէններ, դուշեց ցասումով Սիրիացին, մինթէ հնա՞ր է երևակայել այսպիսի մանրգին կատաղութեան մը ահռելի նշանները։ Այնպէս մը կ'դայ ինձ որ երեք քայլ բնեմ և ոտքով երեք հարուած տալով՝ այս ծաղրելի դահիճներուն մրջնոցը կործանեմ։

— Մի՛, այս ծանրութիւնը մ'առնէք, պատասխանեցին անոր, արդէն անոնք իրենց ձեռքով գերեզմաններն կը փորեն։ Գիտէ՞ք որ տաս տարիէն ետև աս խեղճերուն և ոչ տասներորդ մասը կը մնայ։ Գիտցէք նաև որ եթէ իրարու արիւն ալ չխմեն, սովը, տառապանքը, անժուժկալութիւնը բոլորն ալ կ'առնուն կը տանին։ Աս ալ մէկդի մնայ, եկու նայէ որ պատժուելիք մարդիկն անոնք չեն, հապա ան նատուկ խուժադուժ անձինքն որ իրենց զրասնեակէն՝ մարսողութեան ատեն, միլիոնաւոր մարդկան ջարդ ու բուրդը կը հրամայեն և յետոյ հանդէսով գնատուած կը զովաբանեն։

Ուղեւորին սիրան եղաւ մարդկային մեծագոյն վրայ, որ այնչափ հանդիսական հանդամանքներ ունէր։

— Որովհետև, ըսաւ ան պարոններուն իմաստուններու ընտիր մասը կը կազմէք, և կ'երևի թէ ստակի համա՞ր մարդ չէք պպաներ, ըսէք ինձ, խնդրեմ, ի՞նչ է ձեր գործը։

— Ճանճեր կը յօշոտենք, պատասխանեց իմաստասէրը, թիւեր կը հաւաքենք, մինակ քանի մը կէտերու վրայ համաձայն ենք, իսկ ուրիշ երեք հազարի չափ դժուարալոյծ խնդիրներու վրայ միշտ կը վիճաբանինք։

Ցանկարծ Միքրօ–Մեղասին և Երևակցին խելքին փչեցին որ աս խոհուն հիւլէներուն հարցնեն թէ ո՞ր բանին մէջ համամիտ են։

Երևակցին ըսաւ,— Շնիկ աստղէն մինչև Երիւորեանները ո՞ր չափ է։

Բոլորն ալ միաբերան պատասխանեցին — Երսուն երկու աստիճան ու կէս։

— Անկէ մինչև լուսինը ո՞ր չափ կը հաշուէք։

— Վաթսուն ու կէս երկրի տրամագծի չափ՝ կլոր թիւ համրելով։

— Ձեր օդն ի՞նչ կը կշռէ։

Այս հարցմունքով կարծէր թէ պիտի բռնէր զանոնք։ Բայց ամենքն ալ պատասխանեցին թէ օդը նոյնչափ յատակ ջրէն ինը հարիւր անգամ աւելի թեթև է. իսկ տուքաթի ոսկիէն տասն և ինը հազար անգամ։ Երևակին փոքրիկ զանգանն անոնց տուած պատասխանէն զարմացած՝ քիչ մնաց որ վհուկներու տեղ պիտի գնէր այս մի և նոյն անձինքը ոտոց քառորդ մ'առաջ հողի ունենալին կը զանար։

Վերջապէս Միքրօ–Մեղաս ըսաւ անոնց։

— Որովհետև ձեզնէ դուրս իրերու քաջ հմուտ էք, անշուշտ քաջ ևս տեղեակ պիտի ըլլաք ձեր անձին մէջ եղածներուն։ Նախ ըսէք ինձ թէ ի՞նչ է ձեր հոգին, և ի՞նչպէս կը կազմէք ձեր դատափարները։ Իմաստասէրներն առաջուան պէս միաբե-

բան խօսիլ սկսան, սակայն տարբեր տարբեր կարծիքով էին։ Հինգուրց մը Արիստոտելը մէջ բերաւ, միւսը Տէ+արթին անուն-նը քշեց, ուրիշ մը Մալեբրանշէնը, ան Լէյպնիցին, ան Լոքին։ Ծերունի Ճեմական մ'արձակ համարձակ ըսաւ։

— Հոգին Էնդէլեխիա մ'է, և պատճառ մ'որով կարող է ինչ որ է ը լլալ։ Ան բանս նոյն ինքն Արիստոտել բայէ 'ի բայ կը մեկնէ։

— Շատ հմուտ չեմ յոյն լեզուին, ըսաւ հսկան։

— Ես ալ նոյնպէս, ըսաւ իմաստասէր որդը։

— Ուրեմն ինչ է պատճառը, վրայ բերաւ Միքրօ-Մեղաս, որ չգիտեմ թէ այն ինչ Արիստոտել է որ առջևս կը նեստես։

— Վասն զի, պատասխանեց գիտունը, պէտք է մեր չհմացած լեզուաւ յառաջ բերել ինչ որ բնաւ չենք հասկնար։

Տէքարթեանը վրայ բերաւ.

— Հոգին նուրբ ոգի մ'է, որ իր մօր արգանդին մէջ կ'ընդունի բնաբանական գաղափարներ, և երբոր անկէ կը ծնի' գլխոց երթալու կ'սիպուի, ու հոն իր աղէկ մը գիտածն նորէն կը սորվի։

— Ուրեմն ինչ հարկ է, պատասխանեց եօթնամեայ հենդանին որ քու ոգիդ մօրդ արգանդին մէջ այնչափ գիտուն ըլլայ, ու եռաբը մօրուդ գալով ամենատգէտ մը դառնայ։ Սակայն ոգի ըսելով ինչ կ'իմանաս։

— Ինչ կը հարցնես ինձի, պատասխանեց բանախօսը, ես ինչ ը լլալը չգիտեմ, մինակ կ'ըսուի թէ նիւթ չէ։

— Բայց դուն նիւթն ինչ է գիտես։

— Անշո՛ւշտ, ըսաւ մարդը, օրինակի համար, աս քարս Ճերմակ է և այս ինչ ձևն ունի, նոյնպէս իր երեք յատկութիւնները, անկէ 'ի զատ ծանր է և բաժանելի։

— Լա՛ւ, պատասխանեց Սիրիսցին։ Ան բանն որ բաժանելի, ծանր և Ճերմակ կ'ըսես, ինչ ը լլալը կրնա՞ս բացատրել ինձ,

կը նայիս որ քանի մը յատկութիւն ունի, սակայն բուն իրէն սկիզբն իմացեր ե՞ս մի, ի՞նչ է։

— Չէ՛, ըսաւ միւսը։

— Ուրեմն, խոստովանէ որ նիւթին ինչ ը լլալը չգիտես։

Ան ատեն դատաւորով ուրիշ գիտունի մը զոր բթամտին վրայ բռնած էր, հարցուց թէ հոգին ինչ է և ինչ կընէ։

— Ո՛չինչ, պատասխանեց Մալեբրանշեան իմաստասէրը, Աստուած է ինձ համար ամէն բան ընողը. ամէն բան անոր վրայ կը տեսնեմ և ամէն բան անոր ձեռքը կ'ընեմ. ինքն է ամէն բան կատարողն առանց իմ գործակցութեանս։

— Ուրեմն աւելի աղէկ էր որ չասլրէիր, վրայ բերաւ Սիրիսցի իմաստունը։

— Իսկ դուն, ըսաւ Լէյպնիցեան իմաստասէրի մը, որ հոն կեցեր էր, դուն ինչ կը կարծես հոգիդ։

Լէյպնիցեանը պատասխանեց։

— Հոգիս ասեղ մ'է, որ ժամերը կը նշանակէ կամ թէ ըսեմ, հոգիս տիեզերաց հայելին է, իսկ մարմինս անոր շրջանակն է, ըսածս ակն յայտնի չէ՞ մի։

Լոքին փոքրիկ կողմնակից մը հոն մօտ կեցեր էր երբոր անոր կարծիքը հարցուցին։

— Չգիտեմ, ըսաւ, ինչ կերպով մոռացեր, միտակ աս գիտեմ որ իմ զգայարանացս միջոցաւ մոռացած եմ։ Անհրկիտ եմ նաև որ անմիտ և հոգեղէն արարածներ գտնուին, սակայն կերկնտիմ անշօր սեպել զԱստուած նաև նիւթին գաղափար ազդելու։ Կը յարգեմ մշանջենական զօրութիւնը և ինձ չկրնար զայն սահմանել։ Ուստի բան մը չեմ հաստատեր։ միտակ աս չափս կը հաւատամ. որ մեր կարծածէն աւելի հնարաւոր բաներ կրնան ը լլալ։

Սիրիսցի կենդանին խնդուկը բռնեց և տեսաւ որ էն խելա-

ցին ան էր մէջերնին։ Ուստի Լոքին կողմը քաշողը գրկելու խղճ ունէր, թէ որ իր հասակին անչափ համեմատութիւնը ներէր։ Դժբաղդաբար հոն տեղս փոքրիկ կենդանի մը կար քառաձև խոյրով որ միւս բանխնամտոտ կենդանիներուն խօսքը կտրեց և ընտեր ամէն բանին գաղտնիքը ինքը միայն գիտէ, և գիտցածն ալ Սուրբ Թովմասի քարոզին մէջ կը գտնուի։ Վերջը ան երկնաբնակ անձերուն ոտքէն մինչև ցդլուխ աչքով անդամ մը չափեց և պնդեց թէ իրենք, և իրենց աշխարհը, արևը և աստղերը, վերջապէս ամէն բան մի միայն մարդուս համար շինուած են։ Այս խօսքիս վրայ՝ մեր երիտ. ուղղութիւնեն իրարու վրայ ընկան, անմարելի ծիծաղ մը գիրենք բռնելով, որ ըստ Հոմերի՝ աստուածոց բաժինն է։ Ուսերնին ու փորերնին կերթար կ'դար խնդալէ։ Այս ալէ կոծուելեան և յուզման մէջ նաւը որ Սիրիացիին եղունգին վրան էր, Երեակցիին վարտիքին գրպանին մէջ ընկաւ։ Ան երկու խեղճ մարդիկը երկար ատեն փնտռելով՝ վերջապէս նաւաստիները դտան և տեղերնին տեղաւորեցին։ Սիրիացին փոքրիկ որդերը բռնեց, սիրով հետերնին խօսեցաւ, թէ և սրտին խորէն նեղացած էր որ այնչափ փոքրիկ մարդիկ այնքան մեծ գոռոզութիւն ունենան։ Բայց դարձեալ անոնց խօսք տուաւ որ իրենց համար խնամասիրական գրքոյկ մը շարադրէ և որ և իցէ բանին բուն իսկ պատճառը բացատրէ։ Ստուգիւ ալ չմոռցած շնորհեց անոնց ան գիրքը՝ զոր Փարիզի Ճեմարանը տարին։ Սակայն երբոր Քարտուղարը (Գոնդնել) զան բացաւ, մինակ Ճերմակ թուղթ գըտաւ և ըսաւ։— Աստո՛ւած իմ, կը կասկածէի որ ինձ այսպէս գը պիտի խաղայ։

ՎԵՐՋ ՄԻՔՐՈ-ՄԵԳԱՍԻ

ԾԵՐԱԿ ՈՒ ՍԵՐ

ՃԵՐՄԱԿ ՈՒ ՍԵԻ

Ամեն մարդ Գանոտահար նահանգին մէջ՝ գեղահասակ Բուստոնին արկածը գիտէ։ Այս երիտասարդը Միրզայի մը միակ որդին էր։ Միրզան Գաղղիացւոց մէջ մարքէզի՝ ու Գերմանացւոց մէջ պարոնի համանշանակ է։ Բուստանին հայրը՝ չափաւոր ստացուածքի տէր ըլլալով՝ իր որդին օրիորդի մը կամ անոր աստիճանակից միրզատիպի մը հետ պիտի կարդէր։ Այս ինամուն թեան երկու ընտանեաց ալ սաստիկ կը բաղձային, ուստի երիտասարդը՝ ոչ միայն ծնողացը մխիթարութիւնը պիտի ըլլար, այլ նաև իր կնկանը հետ երջանիկ կեանք մը պիտի վարէր։

Բայց ա՜խ՝ Բուստան Գասրի ուծնամաճառը երթալով Քաշմիրի իշխանուհին տեսեր էր։ Այս ուծնամաճառն աշխարհիս մէջ ամենէն նշանաւորն՝ ու Գասրայի և Աժաէրիանի ուծնամաճառներէն անհամեմատ աւելի բանաւոր է։ Իսկ Քաշմիրի իշխանին իր աղջկանը հետ այս ուծնամաճառը գալուն պատճառը ասի է։

Այս իշխանն իւր դանձէն երկու հաղուագիւտ բան գողցուցեր էր, մէկը բթամտի մեծութեամբ անպատմանդ մը՝ որուն վրայ այն տեսն Հնդկաստանցւոց յատուկ արուեստով մը՝ որ հիմա կորսուած է, օրիորդին պատկերը գծագրած կ'երևէր։ Միւսը նիզակ մ'էր՝ որ ինքնիրեն ուղած տեղդ կ'երթար։ Այս հնարը թէև մեր մէջ անսուր չէ, բայց Քաշմիրցւոց մէջ տարօրինակ բան մը կը համարուէր։

Քաշմիր մը թագաւորին այս երկու ծանրագին բաները գողնալով՝ իշխանուհին բերաւ ու ըսաւ.

— Առ սա երկու կտոր բաներն, սա և զգուշութեամբ պահէ, ինչու որքան ճակատագիրդ ասոր վրայ գրուած է։ — Այս ըսելով՝ թողուց գնաց ու նորէն չերևցաւ։ Քաշմիրի իշխանը

յոյսը կտրած՝ Գապուլի տօնավաճառն եկաւ, այն գիտմամբ որ թերևս ամեն կողմէն այնտեղ եկող վաճառականներուն մէկուն քովէն իւր անդամանդն ու նիզակը կ'ելնեն։ Երբոր Ճանբորդութիւն կ'ընէր՝ իր աղջիկն ալ հետը կը տանէր։ Իսկ օրիորդն անդամանդը զգուշութեամբ գօտիին մէջ պահեց, ու նիզակը՝ զոր չէր կրնար վրան կրել, Քաշմիր թողուց ու իր Զինաստանէն եկած մնտուկին մէջ աղէկ մը կղպեց։

Ռուստան և իշխանուհին Գապուլի մէջ դիրար տեսան։ իրենց մանկական անկեղծութեամբն ու երկրին տարած սիրովը սիրահարեցան։ Օրիորդը սիրոյն նշան անդամանդն անոր ընծայեց, և Ռուստան անկէ զատուելու ժամանակը խօսք տուաւ, որ Քաշմիր պիտի դայ և ծածուկ անոր հետ նորէն տեսնուի պիտի։

Գեղահասակ Ռուստանն երկու մեբիմ խորհրդակից ունէր, որոնք գրագրի, ախոռապանի, շտեմարանապետի և սենեկապանի տեղ ալ իրեն կը ծառայէին. մէկուն անունը Տպագիրն ու միւսինը Երենոս էր։ Առաջինը՝ գեղեցիկ, վայելչակազմ, Վրացի կնկան մը պէս ճերմակ, Հայազգի մը պէս անուշ և պաշտօնասէր, ու Ասորիի մը պէս ալ խնամտուն մարդ մ'էր։ Միւսը սիրուն Հնդիկ մ'էր՝ Տպագիրնէն աւելի ժիր ու ճարտար և դժուարին գործի մ'առջև չկեցող։ Ռուստան ասոնց խնայուց թէ ճանբորդութիւն ընելու միտք ունի։ Տպագիրն եռանդով՝ բայց խոհեմութեամբ ու տիրոջը աչքէն չելնելու չափ՝ ջանայ անոր գիտաւորութիւնը փոխելու, տեսակ տեսակ արգելքներ յառաջ բերելով։ Ի՛նչ անպիտութիւն է, ըսաւ, երկու ընտանիք յուսահատութեան մէջ ձգելը, քու հեռանալդ ծնողացդ սրտին սուր մը խօթել է։ Ռուստան սոսկալով ղլջաւ. բայց Երենոս նորեն անոր միտքն ըրաւ ու խիղճը հանդարտեցուց։

Սակայն երիտասարդն այս երկար ճանբորդութեան համար ոտակ չունէր։ Խնամտուն Տպագիրն անոր փոխ դրամ առնուլ

չտուաւ, բայց Երենոս ամեն բան հոգաց։ Զարտուղութեամբ մը նախ տիրոջը անդամանդը վերցուց ու անոր նման շինծու մը շինել տալով տեղը դրաւ. յետոյ քանի մը բիւր ռուփիի փոխարէն բան իսկ անդամանդը Հայազգիի մը քով գրաւ թողուց։

Երբոր Ռուստան ռուփիները ձեռք ձգեց, Ճանբայ ելնելու համար ամեն բան պատրաստ դտաւ։ Կահ կարասին փղի մը վրայ բեռնաւորելէն ետև՝ ձիերը հեծան։ Ան ատեն Տպագիրն իր տիրոջը ըսաւ.

— Այս Ճանբորդութեանս նկատմամբ քեզի քանի մը յանդիմանութիւն ընելու յանդգնեցայ, բայց յանդիմանելէն ետև պէտք է որ հնազանդիմ։ Ես քուկդ եմ, զքեզ կը սիրեմ ու աշխարհիս ծայրն ալ հետդ պիտի դամ, բայց Ճանբան ասկէց երկու փարսախ հեռու եղող պատգամին դիմենք և անոր խորհուրդ հարցընենք։ Ռուստան յանձն առաւ։ Պատգամը պատասխանեց, թէ որ աբՒՆԷՂ ԵՐԵՆՈՍ ԱԲԵՄԱՈՒ պէՒՆ ԳԱՆՈՒՆԷ։ Ռուստան այս պատասխանէս բան մը չհասկրցաւ։ Տպագիրն սնդեց, թէ չարագուշակ խնամտ մը կը պարունակէ. Երենոս՝ որ միշտ շողոքորթ էր, համոզեց թէ այն պատգամը իրենց շատ նպաստաւոր պիտի ըլլայ։

Ուրիշ հարցուկ մը Գապուլի մէջ կար, անոր ալ դացին։ Այս ևս այսպէս պատասխանեց.

— ԹԷ ՈՐ ԳԱՆԱՆԱՍ՝ ՂՂԷՈՐԷ ԱՊԱՆԱՍ. ԵՒ ՈՐ ՅԱՂԵՍՈՂ ԵՍ՝ ՂՂԷՈՐԷ ՅԱՂԵՍ. ԲՈՒՍՊԱՆ ԵՍ՝ ԲՈՒՍՊԱՆ ՊԷՈՐԷ ՂԷԼԼԱՍ։ — Այս գուշակութիւնը միւսէն անիմանալի երևցաւ ամենուն։ Զգոյշ կեցիք, կ'ըսէր Տպագիրն. բանէ մը մի վախնաք, կը գոչէր Երենոս, ու այս ծառան՝ ինչպէս որ կ'երևի, տիրոջը առջև ամենէն աւելի իրաւունք ունեցողն էր, վասն զի անոր սէրն ու յոյսը կը բորբոքէր։

Գապուլէն մեկնելով ընդարձակ անտառ մը հասան, և սկսան յառաջ երթալ. ետքը գետինը խոտին վրայ նստան կերակուր

ուտելու և ձիերը արածելու թող տուին: Երբոր ուտելիքն ու սեղանի սպասն առնելու համար փղին վրայէն բեռը կ'իջեցնէին, տեսան որ պզտիկ կարաւանէն Տպագիսն ու Եբենոս պակասեն: Ան ատեն ծառաները զանոնք փնտռելու համար ապիս անդին կը յղուին, կը պոռան կը կանչեն: Երեսնց ձայնը ամեն դին կը բռնէ, ու անտառն Եբենոսին ու Տպագիսին անուններովը կը թնդայ: Բայց 'ի զուր, ոչ անոնցմէ մէկը տեսան և ոչ իրենց աղաղակին պատասխանող մը գտնուեցաւ:

— Միայն անդղ մը տեսանք, ըսին, Ռուստանին, որ արծուի մը հետ կը կռուէր, ու անոր փետուրներն կը փետէր:

Այս արկածը Ռուստանին հետաքրքրութիւնը շարժեց ու ինքն անձամբ երաւ կուռին տեղը գնաց: Սակայն ոչ անդղ և ոչ արծիւ տեսաւ, այլ միայն իր բեռնաւորուած փիղը գտաւ, որուն վրայ ահագին ռնգեղջիւր մը յարձակեր էր: Մէկը եղջիւրովը կը զարնէր, միւսը պատնէշովը:

Ռուստանին մտենդարուն՝ ռնգեղջիւրն որսը թողուց փախաւ: Փիղը տեղը բերին, բայց ձիերը հոն չգտան:

Անտառի մէջ ճանրորդութիւն ընողին ինչ այլանդակ բաներ կը հանդիպի եղեր, կը գուշէր Ռուստան: Իսկ ծառաները ահ ու դողի մէջ մնացեր էին, ու իրենց տէրը կը կատղէր, որ թէ ձիերը, թէ սիրելի Հնդիկն և թէ խնամատուն Տպագիսը կորսընցուց, որուն հետ սիրտ բարեկամութեամբ կապուած էր, թէև Տպագիսն միշտ անոր հանմիտ չէր:

Ռուստան երբոր կը մտածէր, որ քիչ մը անդին Քաշմիրի զեղեցիկ իշխանուհին քովը պիտի գտնուի, կը մխիթարուէր. բայց յանկարծ շերտաւոր իշու մը հանդիպեցաւ, ղոր կորովի և անգութ գեղջուկ մը սաստիկ կը ծեծէր: Այս տեսակ էշերը գեղեցիկ, հաղուագիւտ և արագընթաց են: Կենդանին գեղացին անթիւ հարուածներուն կիսեր արձակելով կը պատասխանէր,

որոնք մեծ կաղնի մ'արմատէն խլելու կարող էին: Իսկ գեղահասակ Ռուստան՝ իրաւամբ իշուն կողմը բռնեց, որ արդարև սիրուն արարած մ'էր: Գեղացին խոյս տալով իշուն կ'ըսէր. — Անշուշտ դու փոխարէնը ինձ պիտի հատուցանես: Էշն իր անոյշ բարբառովն աղաչին շնորհակալ եղաւ, անոր մօտեցաւ, ինքզինքը շոյել տուաւ, և ինքն ալ զանի զգուեց: Ռուստան ճաշէն ետքը վրան հեծաւ ու ծառաներովը Քիշմիրի ճանբան բռնեց. ասոնցմէ ոմանք հետի էին, ոմանք ալ փղին վրայ նստած:

Ռուստան իշուն վրայ հեծնելուն պէս՝ էշն է զլուխը դէպ 'ի Գասպուլ կը տնկէ, փոխանակ Քաշմիրի ճանբան շարունակելու: Տէրը պարապ տեղ սանձը կը դարձնէ, կը թուլցնէ, ծունկերը կը սեղմէ, մտրակը անոր կուշտին կը խօթէ, աջ ու ձախ դին խարազանը կը խաղցնէ, կամակոր աւանակը շարունակ դէպ 'ի Գասպուլ կ'ընթանար:

Ռուստան արիւն քրտինք թափելով կը պոռար, կը փրփրէր, կը կատղէր. յանկարծ անդիէն ուղղավաճառ մը դիմացը կ'ելնէ ու կ'ըսէ. — Տէր, կը նայիմ որ էշդ շատ սատանայ է. գլեզ չուչած տեղդ կը տանի. թէ որ կ'ուզես՝ ինձ տուր, ու անոր փոխարէն իրմէ չորս ուղտ ընտրէ առ: Ռուստան շնորհակալ կ'ըլլար Աստուծոյ՝ որ այսպիսի անշահասէր մարդ մ'առջևը հանեց, ու կ'ըսէր, — «Ուրեմն Տպագիսն իրաւունք ունէր ըսելու թէ ձախորդ ճանբորդութիւն մը պիտի ընեմ»: Ուստի էն գեղեցիկ ուղտին վրայ կը հեծնէ ու միւս երեքը ետևէն կ'երթան. քիչ ժամանակէն իւր կարաւանին կը հասնի, կը միանայ, ու կը կարծէ թէ երջանկութեան ճանբուն մէջ կը գտնուի:

Հաղիւ թէ Ռուստան չորս փարախ յառաջէր քալեր, և ահա խորունկ, ընդարձակ ու սրընթաց հեղեղատ մ'ելաւ առջևն, որ սեպաձև ու փրփրէ ճերմակցած ժայռերէ կը վազէր: Զրվէժին երկու դին եղող վիհերը՝ մարդուս աչքը դարձնելով ... —

կում կ'ազդէին : Ասկէ ոչ անցնելու և ոչ աջ ու ձախ կողմն երթալու հնար կար : Ռուստան ըսաւ , «Վախնամ որ Տպաղիոն իրաւունք ունէր Ճանբորդութիւնս պարսաւելու և ես անմտութիւն ըրի անոր չանսալուս : Գոնէ թէ որ հիմա մօտս ըլլար , ինձ խորհուրդներովն կ'օգնէր . Երենոս ալ գիս կը միխիթարէր ու այս չարեաց դարման մը կը հնարէր : Բայց ափսո՛ս , ամէն բանէ զուրկ եմ : » Ռուստան աւելի ահ ու դողի մէջ ինկաւ երբ իր ընկերներուն սարսափը տեսաւ : Գիշերը սաստիկ մութ էր , և լալով անցուցին : Վերջապէս մեր սիրահար Ճանբորդին քունը տարաւ , վասն զի յոգնած ու տրտում էր : Առտուն կանուխ արթննալով կը տեսնէ որ ջրվէժին մէկ եզրէն միւս եզրը մարմարեայ կամուրջ մը ձգուեր է :

Ան ատեն տեսնելու բան էր նաև իւր ընկերներուն ուրախութեան և զարմանաց-գոչումն ու աղաղակը : «Մի թէ կարելի է , մի թէ երազ է , ի՛նչ հրաշք . արդեօք անցնի՞նք» կը պոռային : Ամէնքը ծնկի վրայ կգան , կ'ելնեն դէպ 'ի կամուրջը կ'երթան , դեմինը կը համբուրեն , երկինք կը նային , իրենց ձեռքերը վեր կը վերցնեն , գոգդողալով կամրջին վրայ կը կոխեն , կ'երթան , կը դառնան , կը հեռանան , կ'ապշին , կը մնան . իսկ Ռուստան կ'ըսէր . «Վերջապէս երկինք ինձ նպաստաւոր է , Տպաղիոն ըսածը չէր գիտեր . գուշակներն յաջող էին : Ստուգիւ Երենոս իրաւունք ունէր , բայց ինչո՞ւ համար քովս չէ» :

Հապիւ թէ խումբը ջրվէժէն քիչ մը կը հեռանայ , և ահա ահագին շառաչմամբ կամուրջը վէրին մէջ կը կործանի անհետ կ'ըլլայ : «Ուղածս ալ այս էր . շատ աղէկ եղաւ գոչեց Ռուստան . օրհնեալ է Աստուած , փառքքիզ Տէր : Անշուշտ Աստուծոյ կամքն է որ նորէն հայրենիքս ոտք չկոխեմ , վասն զի այնտեղ անհնարն մարդ մը պիտի մնայի . և կը նայիմ որ գիս սիրուհիս հետ կ'ուզէ միացրնել :

«Այո , Քաշմիրի իշխան պիտի ըլլամ : Ուստի սիրուհիս ստանալով Գանտահարի միրզայութիւնս պիտի ստանամ : Ռուստան ըլլամ չըլլամ հոգս չէ , ինչու որ երեւելի իշխանութեան մը պիտի հասնիմ . ահաւասիկ պատգամին մէկ մասը ուղղիս պէս պարզ և ճշգրտով մեկնուեցաւ . իսկ միւս մասը նոյնպէս յայտնի պիտի բացատրուի : Շատ երջանիկ եմ . բայց ինչո՞ւ համար Երենոսը քովս չէ : Տպաղիոնին վրայ այնչափ չեմ ցաւիր որչափ Երենոսին վրայ» :

Ռուստան ուրախ զուարթ դեռ քանի մը փարատես յուսաջ գացած էր , երբոր իրիկուան դէմ նշմարեց երկայնաձիգ ամբարտակի նման լեռերու գօտի մը՝ որ եթէ Բաբէլոնի աշտարակը լմնցած ըլլար , անկէ ալ բարձր էր կրնայինք ըսել , զարհուրած կարաւանին Ճանբան բոլորովին կարեցաց ոգեց

Ամենքնին միաբերան գոչեցին — «Աստուած սահմաններ է որ՝ այստեղս մեռնինք . կամուրջը Գանտահարակոյ՝ որպէս զի եւ դառնալու յոյս չունենանք : Մեր առջեւը լեռներ վրնդեցեալ՝ որ դարձեր թալու հնար չգտնենք . ով Ռուստան , ով Թշնամի Միրզա , երբէք Քաշմիր տեսնելիք չունինք , երբէք Գանտահարայ երկիրը պիտի չմտնենք» :

Ռուստանին սիրտը՝ որ առաջ անսահման ուրախութեամբ ու դեղեցիկ յոյսերով կ'օրորէր , հիմակ ամենագառն ցաւերու տակ կը մաշէր , ով ով այն գուշակութիւններն իրեն օգտին կը մեկնէր . միայն «Ո՛վ երկինք , ով Աստուած Հայրախնամ , ինչու համար իմ բարեսիրտ Տպաղիոն բարեկամս կորուսի» կը պոռար :

Երբոր յուսահատ ուղեկիցներուն մէջ տեղ կեցեր՝ խոր հառաչանքներով ու արտասուելով այս խօսքերը կ'ըսէր , յանկարծ լեռան խարիսխը կը ճղքի , ու ասոնց շլացած աչքերուն բիւրաւոր ջահերով լուսաւոր կամարաձև սրահ մը կ'երևի : Մէկէն Ռուստան ազաղակ մը կը ձգէ , ծառաներէն ոմանք ծունր կը դնեն ու-

մանք ապշութենէն գլխի վրայ կ'ընկնին, ու միաբերան «Ասի, ասի հրաշք է կը գոչեն, ու Ռուստան Ալիդմանին* մտերիմ և Պրահմայի սիրական է, աշխարհիս ինքնակալը պիտի ըլլայ» կ'ըսեն: Ռուստան ալ այս խօսքերուս կը հաւատար, ուրախութենէն կը ցատկէր և ինքզինքէն ելած կ'ըսէր. «Ա՛խ, Եբենոս, սիրելի Եբենոս, ո՞ւր ես, ինչո՞ւ համար այս հրաշալեաց ակամասես չըլլաս, ինչո՞ւ դիպեղ կորսընցնեմ: Քաշմիրի գեղեցիկ իշխանուհիս, երբ պիտի տեսնեմ քու գեղեցկութիւնդ:

Ռուստան՝ ծառաները, փիղերն և ուղտերը հետս առած՝ լեռան կամարին տակէն յառաջ կ'անցնի, ու անոր ծայրը հասնելով՝ անկէց ալ ծաղկաւէտ ու վտակներով պատած մարգագետին մը կը մտնէ. այս մարգագետնին ծայրէն՝ ծառաշէն ճանապարհներ աչքի կտրածին չափ կ'երկարնային, և ասոնց վերի ծայրն ալ գետակ մը կար, որուն երկայնութեամբը շնուած հաղարաւոր սիրուն գեղջկական տուներ կը տեսնուէին զմայլելի պարտէզներով: Աղջիկ մինոցին երիտասարդն ամէն կողմէն երդերու և նուագարաններու ձայներ կը լսէ, ու կը նայի որ՝ հոն պար կը պարեն: Ռուստան շուտ մը գետակին կամրջէն կ'անցնի, ու առջի հանդիպած մարդուն կը հարցնէ, թէ ո՞ր քաղքին մէջ կը գտնուի:

Ան մարդը պատասխան կու տայ. «Քաշմիրի գեղեցիկ նահանգին մէջն ես. կը նայիս որ բնակիչները ինքզինքնին ուրախութեան և զեղիութեան տուած են, ինչու որ մեր սիրուն իշխանուհին հարսնիքը կը կատարենք, որ Պարպապու պարոնին հետ կը կարգուի, ինչպէս որ հայրը անոր խոստացած էր: Ատուած անոնց երջանկութիւնը յարատեւէ»: Այս խօսքերէս Ռուստան որպէս թէ կայծակէ զարնուելով մարեցաւ գետին ընկաւ. իսկ Քաշմիրցին կարծեց թէ անի կաթուածի ենթակայ է.

*Ալիդմանու և Պրահմայի Հնդկաց աստուածներն են։

ուստի առաւ տունը տարաւ զանի ու հիւանդը երկար ժամանակ անշունչ մնաց: Ան ատեն քաղքին երեւելի երկու բժիշկները կանչուեցան և հիւանդին երակը փնտռեցին: Ռուստանին խելքը քիչ մը գլուխը եկած ըլլալով կը հեծեծէր, աչուընները ապին անդին կը դարձնէր, և ատեն ատեն կը պոռար, «Տպագիտն, Տպագիտն, յիրաւի դուն շատ իրաւունք ունիս եղեր»:

Բժշկին մէկը Քաշմիրցի պարոնին ըսաւ. «Հիւանդին ձայնէն կ'իմանամ որ Գանտահարցի է և կ'երևի որ այս տեղի օդը չվերցընէր. ուստի հայրենիքը դառնայ ապէկ կ'ընէ. ինչու որ աչքերէն կը տեսնուի որ խելքը կորուսեր է. յանձնէ ինձ որ բնիկ քաղաքը տանիմ և հոն բժշկեմ»:

Միւս բժիշկը սնդեց թէ «Մի միայն տրամութեան հիւանդութիւն մ'ունի, և թէ իշխանուհին հարսնիքը տանել կաքաւել տալու է»: Երբոր այսպէս կը խորհրդածէին՝ հիւանդը բոլորովին առողջացաւ. բժիշկներուն ճանրայ տուին ու Ռուստան հիւրընկալին հետ գլուխ գլխի տուաւ խօսակցելու համար:

— Տէր իմ, ըսաւ անոր, ներէ առջևդ մնալուս, գիտեմ որ ըրածս անքաղաքավարութիւն էր. հիմա ինձ ըրած պատուոյդ փոխարէն ընդունէ, կ'աղաչեմ, իմ փիղս: — Յետոյ գլխին եկածները պատմեց՝ ճանրորդութեան բուն նպատակը զգուշութեամբ ծածկելով: Բայց յանուն Ալիդմանի և Պրահմայի խնդրեմ, հասկցուր ինձ ըսաւ, թէ՝ Քաշմիրի իշխանուհին առնող Պարպապուն ո՞վ է, աղջկան հայրը զանի ինչպէս ընտրեց իր վեսան ընելու համար, և ի՞նչ պատճառաւ իշխանուհին այս բանիս կը հաճի:

— Տէր իմ, ըսաւ անոր Քաշմիրցին, բնաւ իշխանուհին չէ Պարպապուն ուզողը: Ընդ հակառակն՝ երբոր բոլոր քաղաքացիք ուրախութեամբ հարսնիքը կը հռչակեն, օրիորդն իր սպասուհին աշտարակին մէջ քաշուած՝ միայն կու լայ ու կ'ողբայ, և ամենե-

«Ին այս ընդհանուր ցնծութեան մասնակից ըլլալու յօժարութիւն չունի : Ռուստան այս խօսքերէն նոր հոգի ստացաւ . վիշտերէն դեղնած դէմքը գոյն առաւ , ու կարմիրցաւ : Կ'աղաչեմ՝ , ըսէ ինձ , ինչու համար Քաշմիրի իշխանը իր աղջկան կանացը հակառակ զանի Պարպապուին տալու ոսք կը կոխէ :

— Ահաւասիկ պատճառը , պատասխանեց Քաշմիրցին : Գիտես որ մեր վերհափառ իշխանը մեծ անդամանդ ու նիզակ մը կորցուց , որոնք աչքին լոյսն էին : «Ա՛հ , քաջ տեղեակ եմ այդ բանին» ըսաւ Ռուստան :

— Լաւ ուրեմն , պատասխանեց հիւրընկալը . մնաց որ մեր իշխանն այն երկու անգին կորուստները փնտռել տալէն ետև , չգտնելուն վրայ յուսահատած՝ խոստացաւ որ՝ ով որ անոնցմէ գտնէ մէկը գտնելով իրեն բերէ , աղջիկը անոր պիտի տայ : Ահա Պարպապու անունով պարոն մը մ'եկաւ , ադամանդը բերաւ ու վաղը իշխանուհին իրեն կին պիտի առնու :

Ռուստանին գոյնը նետեց . կցկտուր շնորհակալութիւն մ'ըրաւ , և հիւրընկալէն զատուելով մէկէն ուղղը հեծաւ ու մայրաքաղաքը հասաւ , ուր որ հարսնիքը պիտի կատարուէր : Անկից շուտ մը պալատը կ'երթայ և իշխանին հետ կ'ուզէ տեսնուիլ , ըսելով թէ՝ խիստ կարևոր բաներ ունի անոր խնայրնելու : «Հիմա ժամանակ չունի , հարսանեաց պատրաստութիւններուն զբաղած է իշխանը» կ'ըսեն անոր :

— Ես բուն այս բանին համար կ'ուզեմ զինքը տեսնել և հետը խօսիլ , կը պատասխանէ Ռուստան : Վերջապէս այնչափ կը պնդէ որ ներս կը մտցնեն :

— Տէր իմ , կ'ըսէ , Աստուած ձեր օրերը շքեղութեամբ պահէ . բայց գիտցիք որ ձեր փեսան խաբեբայ մ'է :

— Ինչպէս խաբեբայ , ինչ յանդուգն խօսք , պիդպէս կը խօսին իշխանի մը հետ իր ընտրած փեսային վրայ :

— Հրամերէք , խաբեբայ մ'է , կրկնեց Ռուստան , և ձեր վերհափառութեան փորձով ցուցնելու համար ահաւասիկ հոս իմ քովս է ձեր անդամանդը :

Իշխանը զարմանքով երկու անդամանդները քովէ քով դրաւ . բայց որովհետև արհեստէն հասկցող չէր , սուտը ճշմարտէն զանազանելու կարող չեղաւ :

— Ահաւասիկ երկու անդամանդ , ըսաւ , և ես միայն մէկ աղջիկ մ'ունիմ . տես թէ ինչ մեծ տարբերութիւն է իմն :

Ուստի Պարպապուն կանչել տուաւ , և հարցուց թէ խաբէութիւն է ըրածը : Պարպապուն երդում ըրաւ որ անդամանդը Հայաստանի մը գնած է : Սակայն Ռուստան իրենը ուսկից ձեռքը հասնելը չէր ուզեր խոստովանիլ . բայց այս դժուարութիւնը լուծելու համար՝ միջոց մը առաջարկեց ըսելով թէ՝ թող հրաման տայ իրեն՝ Պարպապուին հետ կռուելու :

— Բաւական չէ , կ'ըսէր , ձեր Ռուստան փեսան անդամանդ մը տայ , պէտք է նաև քաջութեան ցոյցեր տայ : Ես աւելի աղէկ չէ՞ որ իր հակառակորդը սպաննողը իշխանուհին իրեն կին առնու :

— Շատ աղէկ , պատասխանեց իշխանը , արքունեաց համար ասկից աւելի զուարճալի ու գեղեցիկ տեսարան մը չկրնար ըլլալ : Ձեզ նայիմ , շուտ մը կռուի ելէք , յաղթողը՝ Քաշմիրի սովորութեան համեմատ , յաղթուողին զէնքերը պիտի առնու ու աղջկանս հետ պիտի կարդուի :

Երկու փեսայացուները շուտով դաւիթը կ'ինկնեն : Սանդղին վրայ անծեղ մ'ու ագռաւ մը կայէն : Ագռաւը կը կանչէր , «Կռուեցէք , կռուեցէք» : Անծեղը՝ «Մի , մի կռուիք :» Այս բանս իշխանին ծիծաղը շարժեց . իսկ ախոյեանները անոնց ուշադրութիւն անգամ չդրին :

Կռիւը կ'սկսի . պալատականները չորս դին բոլոր կը կենան . իշխանուհին դեռ աշտարակին մէջ գոցուած՝ չուզեր այս տեսարանիս ներկայ գտնուիլ , վասն զի միաբէն կ'անցնէր արդեօք որ՝

իր սիրելին Քաշմիր կը զանուի. իսկ Պարսպապուէն այնչափ կը զղջէր որ ամենևին ուրիշ բան մ՚ալ տեսնելու փոփաք չունէր։

Այս կրիւն ամենավայելուչ կերպով վերջացաւ։ Պարսպապուն տասպասա դետին ինկաւ և ժողովուրդն ալ ասոր մահուանը վրայ շատ ուրախացաւ, վասն զի տգեղ էր. իսկ Բուստան ամենասիրուն երիտասարդ մ՚էր։ Հասարակութիւնը գրեթէ միշտ գեղեցկութեան կողմը կը բռնէ։

Ցաղթողը մեռնողին գրահը, զարդը ու սաղաւարդը հագած ու բոլոր պարտականներն ետևը ձգած՝ վաղերուն ձայնին սիրուհիին պատուհանին տակն եկաւ կեցաւ. ամեն մարդ կը պոռար.

— Գեղեցիկ իշխանուհիդ, երիր նայէ, գեղեցիկ ամուսինդ որ իր տգեղ հակառակորդն սպաննեց։

Այս խօսքերս իրեն նաժիշտներն ալ կը կրկնէին։ Դժբաղդութեամբ իշխանուհին գլուխը պատուհանէն հանելով երբոր իր ետած մարդուն սպառազինութիւնը տեսաւ, յուսահատած վազեց Զինաստանի արկղէն հանեց մահաբեր տէզը ու արձակեց, որ եկաւ իր սիրական Բուստանին սիրտը ծակեց վահան չունենալուն համար։ Երիտասարդն աղաղակ մը ձգեց և այս ձայնէն իշխանուհին իր թշուառ սիրելւոյն ձայնը ճանչցաւ։

Իշխանուհին՝ մազերը թափած՝ մահը սրտին ու աչքերուն մէջ նկարուած՝ վար կիջնէ։ Արդէն Բուստան անոր հօրը գիրկը ինկած արեան մէջկը լողար. օրիորդը հապա թէ կը տեսնէ զանի, և կը ճանչնայ։ Ա՛հ դժոգակ վայրկեան, ահ աղետալի տեսիլ. ո՞վ կրնայ անոր զգացած ցաւը, սէրն ու սգակցութիւնը նկարագրել։ Մէկէն Բուստանին վրայ կ՚ինայ ու անոր պլլուելով — Ընդունէ, սիրելիդ իմ, սիրուհիդ և սպանողիդ առաջին և վերջին համբոյրները, կ՚ըսէ, ու շատ մը տէզը անոր վերջին քաշելով իր սիրտը կը խօթէ ու սիրալիր տարփաւորին մարմնոյն վրայ հոգին կը փչէ։ — Հայրը կը զարհուրի, կը շուարի և աղջկանը պէս ինքզինքը մեռցունելու պատրաստ՝ 'ի զուր կաշխատի զայն աղջկացունելու. վասն զի արդէն շունչը կտրած էր։ Ան տեսնելով այն մահաբեր տէզը կ՚անիծէ, գետինը կը զարնէ կը կոտրէ, ու մահաբեր անդամանդները կը նետէ։ Երբոր ամուսնութեան տեղ աղջկանը յուղարկաւորութեանը կ՚դրաղէին, ինքը Բուստանը արիւնթաթաւ պաղատը տանել կու տայ, որ գեռ կենդանութեան շունչ մ՚ունէր վրան։

Անկողնին մէջ հանդչելուն պէս, Տպաղիոն ու Եբենոսը յանկարծ կը տեսնէ իր երկու կողմը կեցած։ Զարմանքէն քիչ մ՚ոյժ կ՚առնու ու կ՚ըսէ.

— Ա՛հ, անգութ մարդիկ, ինչու դիս երեսի վրայ կը ձգէք, թէ որ դուք թշուառ Բուստանին քովը կենայիք, կարելի է իշխանուհիս գեռ կենդանի մնար։

— Վայրկեան մը քովէդ չհեռացայ, կ՚ըսէ Տպաղիոն։ Ես ալ միշտ քովդ էի, կ՚ըսէ Եբենոս։

— Ա՛հ, ինչ կ՚ըսէք, ինչու համար վերջին ժամուս ալ իս կը նախատէք, պատասխանեց Բուստան ցաւագին ու դողդոջուն ձայնով մը։

— Հաւատա՛ ինձ, ըսաւ Տպաղիոն, արդէն գիտես որ միշտ այդ աղետալի ճանրորդութեանդ դէմ կեցայ, վասն զի անոր սոսկալի հետևութիւնները կը դուշակէի։ Ես էի անդգին դէմ կռուող ու փետտուող արծիւը. ես էի գքեզ հայրենիքդ ստիպմամբ դարձունելու համար կարասիդ ետ տանող փիղը. ես էի այն շերտաւոր էշն որ գքեզ բռնի հօրդ ծոցը կը տանէր. ես քու ձիերդ մորոյցցի. ես հանեցի այն ջրվէժն առջևդ, որպէս զի չանցնիս. ես այն վտանգաւոր ընթացքդ խափանելու համար բարձր լեռ մը կանգնեցի. հայրենիքդ դառնալու համար խրատող բժիշկն ես էի. ես էի այն անծեղն որ կը պատար քեզի որ չծեծկուիս։

— Իսկ ես, ըսաւ Եբենոս, արծիւը փետտող անգդն էի. եղջիւրներովը փիղը զարնող ոնդեղջիւրը, էշը ծեծող գեղջուկը։

կորստեանդ համար քեզի ուղարկը ընծայող վաճառականն էի։ Ես էի անցած կամուրջդ շինողն ու քարանձաւը փորողը։ Ես եմ այն բժիշկն որ կաքաւելու գքեզ կը քաջալերէր, այն ագռաւն որ գքեզ կուռի կը յորդորէր։

— Ափսո՛ս, չես յիշեր այն պատգամներն, ըսաւ Տպաղիոն։ Թէ որ Աբեսէլ Երբենոս, Աբեսոմոպ պէրէ գոնոսիս։

— Այո՛, ըսաւ Երբենոս, հոս մեռեալին երեսը դէպ՛ի Արեւմուտք դարձուցած կը թաղեն։

— Գուշակը բացայայտ կը խօսէր, ինչ ընեմ թէ որ միտքը չմոռնեցիր։ Սրոպոպ, և չէրէ ոպանոս. ինչու որ անդամանդ մ՚ունէիր, բայց շինծու ըլլալը չէիր գիտեր։ Յաղթող ես և կը ոնդանիս, Բոսպոռոն ես և կը դարձրիս ըլլալէն։ Ըսել է թէ ամեն բան կատարուեցաւ։

Այսպէս խօսելու ատեն՝ չորս սպասակազոյն թեւեր Տպաղիոնին մարմինը ծածկեցին, ու չորս սեւազոյն թեւեր ալ Երբենոսինը։

— Ի՞նչ է տեսածս, պոռաց Բուստան։

Տպաղիոն ու Երբենոս միաբերան պատասխանեցին։ — Տեսածդ քու հրեշտակներդ են։

— Է՛հ, պարոնները, ըսաւ անոնց Բուստան վշտագին, ինձմէ ինչ կը խնդրէք ուրեմն. ինձի պէս խեղճ մարդու մ՚երկու հրեշտակ ինչ պէտք են։

— Այս է օրէնքը, ըսաւ Տպաղիոն. ամեն մարդ իր երկու հրեշտակն ունի։ Այս բանս գրողը նախ Պղատոն եղաւ, և յետոյ շատերը նոյնը կրկնեցին։ Կը տեսնես որ յայտնի և ստոյգ ճշմարտութիւն մ՚է։ Ես խօսողը քու բարի հրեշտակդ եմ, ու պաշտօնս մինչև վերջին շունչդ քու վրադ հսկել էր։ Կարծեմ թէ պարտքս ճշդիւ կատարեցի։

— Բայց, ըսաւ հոգեվարքը, թէ որ դուն ինձ ծառայելու սահմանուած ես, ըսել է թէ ես քենէ գերադոյն բնութիւն մը

ունիմ՝, ասկից զատ՝ ինչպէս կը յանդգնիս ըսելու թէ իմ բարի հրեշտակս ես, երբոր իմ բոլոր յոյսերս պարապ հանելու կը յորժարիս, և կը թողուս որ ես ու սիրուհիս թշուառ մահուամբ մեռնինք։

— Ափսո՛ս, այդ էր քու ճակատագիրդ, ըսաւ Տպաղիոն։

— Ուրեմն թէ որ ամեն բան ընողը ճակատագիրն է, պատասխանեց հոգեվարքը, ինծի ինչ օգուտ ունի հրեշտակը։ Իսկ դուն Երբենոս, չորս սեւաթոյր թեւերովդ անշուշտ չար հրեշտակս պիտի ըլլաս։

— Աղէկ ըսիր, պատասխան տուաւ Երբենոս։

— Բայց արդեօք իշխանութիւնս ալ չար հրեշտակն էիր։

— Ո՛չ, անիկա ալ իրենն ունէր, որուն կրցածիս չափ օգնեցի։

— Ա՛հ անիծեալ Երբենոս, թէ որ այդչափ անզգամ ես, անշուշտ Տպաղիոնին տէրը քու տիրոջդ ընտանիք։ Տարբեր էակներ զձեզ ստեղծած պիտի ըլլան. ասոնցմէ մէկը բարի, միւսը չար կ՚երևի։

— Այդ դատմունքդ հետաւութիւն մը չկրնար ըլլալ, ըսաւ Երբենոս, բայց դժուարալոյծ խնդիր մ՚է։

— Անհնար է, կրկնեց հոգեվարքը, որ բարեգութ էակ մը քեզի պէս դաժան ոգի մը շինած ըլլայ։

— Կարելի կամ անկարելի, յարեց Երբենոս, ըսածս շատ ստոյգ է։

— Աւա՜ղ, խեղճ բարեկամ, ըսաւ Տպաղիոն, չես գիտեր որ դարշելին չարամտութեամբ գքեզ կուռի կը բռնէ, որպէս զի ամբիւնդ տաքնայ և մահուանդ ժամը փութացնէ։

— Կորիր, ոչ քեզմէ և ոչ անկէ գոհ եմ, ըսաւ վշտաբեկ Բուստան։ գոնէ անի կը խոստովանի որ ինձ չարիք հասցունելու եռանդ էր. իսկ դուն որ զիս կը պաշտպանէիր կ՚ըսես, և ոչ բանի մը ծառայեցիր։

— Ցաւ է ինձ, ըսաւ բարի հրեշտակը։

— Նոյնպէս ինձ ալ, պատասխանեց Հոգեվարը. բայց այս արկածներուս մէջ բան մը կայ որուն խելքս չհասնիր։

— Նոյնպէս իմն ալ, պատասխան տուաւ, խեղճ ու բարի հրեշտակը։

— Քիչ ատենէն կը տեղեկանամ, ըսաւ Բուստան։

— Նայինք իրա՞ւ է, ըսաւ Տպագիսն։

Այս միջոցիս ամէն բան սեւերն այլ եղաւ։ Բուստան ինքզինքը հօրը տունը դտաւ և իրեն անկողնոյն մէջ ժամ մը միայն քնացեր էր առանց դուրս ելնելու։

Բուստան յանկարծ քունէն կ'արթննայ արիւն քրտինքի մէջ ընկղմած, և շուարած ինքզինքը կը շօշափէ, կը կանչէ, կը պոռայ, զանգակ կը զարնէ։ Տպագիսն սենեկապանը դիշերուան խոյրոլը յօրանջելով կը վազէ կոյս։

— Միթէ կենդանի՞ եմ, միթէ մեռա՞ծ եմ, կը պոռայ Բուստան։ Արդեօք Քաշմիրի դեղեցիկ իշխանուհին անոր ձեռքէն պիտի ազատի։ . . .։

— Տէր իմ, կարծեմ թէ երազ կը տեսնես, ըսաւ Տպագիսն, սրաղ կերպով մը։

— Ա՜հ, կը գոչէր Բուստան. ուրեմն այն անողորմ Երեւոսը չարս սեւագոյն թեւերովն ոռը գնայ. ան չէ՞ զիս այսպիսի անպուրթ մահուամբ մեռցնողը։

— Տէր իմ, Երեւոսը վերն է, կը խրկայ, կ'ուզես որ արթնցնենք ու վար կանչենք։

— Զարագործը վեց ամիսէ՝ ի վեր զիս կը հալածէ. ան է զիս Գապուլի աղեսաբեր ուծտավաճառը սանողը. ան է իշխանուհին ինձի տուած անդամանդը գողցողը, անոր մահուան ու ճանչողութեանս պատճառը. նոյնպէս նեռէ մը ղարնուելս՝ որով ծաղիկ հասակիս մէջ կը մեռնիմ։

— Հանդարտէ, ըսաւ Տպագիսն, երբէք Գապուլ գացած չունիս, և Քաշմիրի իշխանուհի ըսած անձդ աշխարհիս մէջ չկայ։ Անոր հայրը միայն երկու մանչ զաւակ ունի, որոնք հիմա վարժարան կ'երթան։ Իսկ անդամանդ բնաւ ձեռքդ չանցաւ. իշխանուհին մեռած չէ; վասն զի ծնած չէ. ու դուն շատ ողջ ու առողջ ես։

— Ի՞նչ կ'ըսես. երբոր Քաշմիրի իշխանին անկողնոյն մէջ կը մեռնէի՝ դուն քովս չէիր. դուն չէիր ինձ խոստովանողն որ զիս զանազան դժբաղդութիւններէ հեռացնելու համար արծիւ, փիղ, շերտաւոր էշ, բժիշկ և բաղէ եղեր ես։

— Տէր իմ, անշուշտ այս բաներս երազիդ մէջ տեսար, վասն զի մեր գաղափարները թէ քունի և թէ արթնութեան ատեն մենք կախում չունին։ Աստուած զանոնք միաբէդ անցնելով կ'երևի թէ քեզի զգաստացընել ուզեց այս կրթութեամբ։

— Կարծեմ թէ կը ծաղրես զիս, վրայ բերաւ Բուստան։ Որչափ ժամանակ քնացայ։

— Տէր իմ, կարծեմ ժամ մը միայն քնացար։

— Լա՜ ուրեմն, անիծեալ տրամաբան, ի՞նպէս կ'ուզես որ մէկ ժամու մէջ Գապուլ երթամ գամ, ուսկից վեց ամսէ՝ ի վեր եղեր եմ։ Քաշմիր ճանբորդութիւն ընեմ ու Պարսպապու, իշխանուհին ու ես նոյն միջոցին մեռած ըլլանք։

— Տէր իմ, ի՞նչ կը զարմանաս. ասկից աւելի գիւրին ու սովորական բան մը կա՞յ. այսչափ ժամանակ անդամ պէտք չէ աշխարհիս շրջանը ընելու և զանազան պատահարաց հանդիպելու համար։

— Զրադաշտին դրած Պարսից հանուսօտ պատմութիւնը, միթէ մէկ ժամու մէջ չկարդացուիր, անշուշտ. բայց գիտնալու է որ այն հանուսօտ պատմութիւնն ութ հարիւր հազար տարուան մէջ անցածները կը պարունակէ, և հետզհետէ անոնք աչքիդ առջևէն կ'անցունէ մէկ ժամու մէջ։ Արդ՝ խոստովանէ որ Պրահմային համար նոյն բանն ըսել է՝ այս արկածները մէկ

ժամու կամ ութ հարիւր հազար տարուան միջոցի մէջ անցունելը։ Ենթադրենք թէ, ժամանակն անչափ տրամադիծ մ՚ունեցող անուի մը վրայ կը դառնայ, ու այս ահագին անիւը մէջէ մէջ անթիւ անհամար անիւներ կը պարունակէ, անանկ որ՝ կեդրոնը դտնուածը դրեթէ անտեսանելի ըլլալէն՝ ի զատ, երբ մեծը անդամ մը միայն դառնայ, ինքը յոլովակի պտոյտներ կ՚ընէ։ Ցայտնի է որ ամեն դիպուածներն աշխարհիս սկիզբէն մինչև վերջը հետզհետէ բոպէի մը հարիւր հազարերորդ մասէն աւելի քիչ ժամանակուան մէջ կրնան հանդիպիլ, և կրնանք ըսել թէ այս այսպէս է։

— Ըսածէդ բան մը չեմ հասկրնար, ըսաւ Ռուստան։

Տպազիոն պատասխանեց։ Թէ որ կ՚ուզես՝ թուղթակ մ՚ունիմ որ դիւրաւ քեզի կը հասկրցունէ։ Զրհեղեղէն քիչ մը յառաջ ծնած է, նաև տապանը դտնուած ու շատ բան տեսած է, բայց դեռ մէկ ու կէս տարեկան է։ Ղբերեմ քեզի՝ որ իրեն հետաքրքիր պատմութիւնը պատմէ։

— Գնա շուտով բեր թուղթակդ, ըսաւ Ռուստան, դոնէ մինչև քնանալս զիս կ՚զբօսցընէ։

— Մայրապետ քրոջս տունն է, պատասխանեց Տպազիոն, երթամ բերեմ, որով շատ դոհ պիտի ըլլաս։ Ցիշողութիւնը շատ սուր է, և առանց խելք ցուցընելու ու գեղեցիկ տուներ շինելու՝ պարզապէս ամեն բան կը պատմէ։

— Շատ աղէկ, ըսաւ Ռուստան, այս տեսակ վէպեր շատ կը սիրեմ։

Թուղթակը բերին, որ այսպէս խօսեցաւ։

Ծանօթութիւն։ Կատարինէ Վատէ խաթունը՝ իր հօրեղբօրորդւոյն թղթակալին մէջ թուղթակին պատմութիւնը չգտաւ, որ այս վիպիս հեղինակն է։ Մեղք եղաւ, վասն զի թուղթակը շատ հին ժամանակուան էր։

ՎԵՐՋ ՃԷՐՄԱԿ ՈՒ ՍԵՒԻ

ԹԱՆՕ ԵՒ ՔՕԼԷՆ

ԺԱՆՕ ԵՒ ՔՕԼԷՆ

Շատ մը արժանահաւատ անձեր Ժանօ ու Քօլէնը տեսած ունին Օվէրնի Խուարքաղքին դպրոցը։ Այս քաղաքը աշխարհիս մէջ խիստ երեւելի է իր վարժարանին և կաթսաներուն համար։ Ժանօ անուանի ջրեւաճառի մը որդին էր. իսկ Քօլէնին հայրը քաջ հողագործ մ'էր։ Աս մշակը չորս ջորիով երկիրը կը մշակէր, և տարուան գլուխը կը նայէր որ ձեռքը բան մը չէ մնացեր, իրեն ընկած հարկը, գլխահարկը, բաժինը, մաքսը, տուրքը, տասանորդը, բաշին ու հանգանակը վճարելէն ետև։

Ժանօ ու Քօլէն խիստ սիրուն պատանիներ էին. վիրար կը սիրէին, և մէջերնին մանր մունր ծածուկներ՝ ու անկիրծ ընտանութիւն մը կը տիրէր, որ մարդ մը կարօտիս կը յիշէ ետքը՝ երբոր աշխարհիս մէջ իր ընկերակցին հանդիպի։

Իրենց ուսմունքը լմննալու վրայ էր, երբ գերձակ մը Ժանօին եռազոյն թաւշէ հագուստ մը և Լիոնի նորաշէն բաճկոն մը բերաւ. հետը նամակ մ'ալ ունէր Ժանօյէնց քաջատոհմիկ պատանեկին ուղղուած։ Քօլէն նոր զգեստին վրայ անհամբերութեամբ զմայլած մնաց, իսկ Ժանօ մեծութեան երես մը բռնեց և անով Քօլէնը վշտացուց։ Ասկէ ետև Ժանօ ուսմունքը մէկդի թողուց, հայրենի առջևէն չհեռացաւ, ու ամենը արհամարհել սկսաւ։ Վրան շատ չանցաւ, օրին մէկը սպասաւոր մ'եկաւ կառքով, ու Ժանօյէնց պզտիկ մարքիզին երկրորդ գիր մը բերաւ, որուն մէջ հայրը զաւկին Փարիզ խրկուիլը կ'ապտպրէր։ Իսկոյն Ժանօ կառք մնաւ ու ձեռքը Քօլէնին երկնցուց՝ ի նշան պաշտպանութեան և աղնուականի ժպիտ մը ցուցնելով։ Քօլէն իր խեղճութիւնը զգաց ու լացաւ. իսկ Ժանօ առաջ փառաջ ճանրայ եկաւ։

Հետաքրքիր ընթերցողները պէտք է գիտնան, որ Ժանօին

հայրը քիչ ժամանակի մէջ անբաւ հարստութիւն վաստրիկեր էր իր գործերուն մէջ: Կը հարցընէք թէ ինչպէս այսպիսի մեծ հարստութիւն կ'ստանայ մարդ. պատճառն այն է որ բարեբաղդ կ'ըլլայ: Ժանօին հայրը վայելչակազմ էր, ինչպէս նաև իր կինը՝ որ դեռ թարմութիւնը չէր կորուսեր: Զախորդ դատի մը համար Փարիզ եկեր էին: Բաղդը՝ որ ուզածին պէս կը բարձրացընէ ու կ'իջեցընէ մարդիկը, ասոնք զինուորական հիւանդանոցին մատակարարին կնկանը ներկայացուց. մատակարարը հանճարեղ մարդ մ'էր. վասն զի կրնար պարծենալ որ մէկ տարուան մէջ իր սպանուած զինուորները՝ թնդանօթը տասը տարուան մէջ չէր կրնար ջարդել: Ժանօին հայրը՝ անոր կնկանը, և մայրը՝ մատակարարին հանճարի երեւցան: Ուստի ինքն ևս անոր գործերուն մէջ մատ ունեցաւ և ուրիշ առևտուրի ձեռք զարկաւ: Երբոր միանգամ՝ ջրին հոսանքը գտաւ, թող տուր նաւակդ սահի երթայ, դիւրաւ մեծամեծ փառքերու կը հասնիս: Իսկ ծովեզերքը կեցող դատարկապորտներն աչքերնին տնկած ու ապշած՝ հովալիր առագաստներդ կը դիտեն, և բամբասանքի կը նստին. դուն ալ լսածներդ ականջիդ ետին կը ձգես: Ահա այս տեսակ յաջողութիւն մը Ժանօի հայրը գտաւ և վեց ամիսէն մարքիզութեան կալուած մը գնելով ազնուական եղաւ, Ժանօյենց կոչեցաւ, և իր որդին Պ. մարքիզը դպրոցէն հանեց՝ որպէս զի Փարիզի նոր և շքեղ ընկերութիւններու մէջ նետէ:

Քօլէն՝ որ զգայուն պատանի մ'էր, իր դասընկերին շնորհաւորութեան գիր գրեց, և անոր երջանիկ օրեր բարեմաղթեց: Պզտիկ մարքիզը անոր թուղթը անպատասխան թողուց: Քօլէն ևս տրտմութենէն հիւանդացաւ անկողին ընկաւ:

Հայր ու մայր նախ դեռահասակ մարքիզին քով դաստիարակ մը դրին: Այս դաստիարակն՝ որ թուղթի խմաստակ մ'էր և բան մը չէր գիտեր, իր աշակերտին ևս բան մը չկրցաւ սորվեցընել:

Հայրը կը բաղձար որ զաւակը լատիներէն ուսնի, իսկ մայրը չէր ուզեր: Ասկից վէճ փրթաւ, և անոր վերջ տալու համար՝ մատենագիր մը միջնորդ բռնեցին, որ իր զուարճալի գրուածներովը նշանաւոր էր եղեր: Օրին մէկը զանի ճաշի հրաւիրելով՝ տանտէրը սկսաւ ըսել անոր. «Պարոն, որովհետև լատիներէն գիտէք և արքունեաց մէջ կրթուած մարդ մ'էք....

— Ո՞վ, ե՞ս, պարոն, լատիներէն գիտնա՛մ, ամենևին և ոչ մի բան գիտեմ, պատասխանեց մատենագիրը, և շատ ուրախ եմ այս բանիս համար: Ցայտնի է որ մարդ իր հայրենի լեզուն աւելի լաւ կը խօսի՝ երբոր բոլոր ջանքը և ճիգը մինակ անոր կը թափէ քան թէ օտար լեզուներու: Նայէ անգամ մը մեր կիներուն. իրենց միտքը մերինէն աւելի տուր է և ախորժելի. իրենց նամակներէն շնորհ ու մեղր կը վազէ. ինչու համար այս մասին մեզնէ գերազանց են, վասն զի լատիներէն չգիտեն:

— Հիմա ի՞նչպէս եղաւ, իրաւունք չունէ՞ք, ըսաւ տիկինը: Կ'ուզեմ որ որդիս ուշիմ մարդ մ'ըլլայ և աշխարհիս մէջ յաջողի. կը տեսնես որ եթէ լատիներէն գիտնար՝ բանը լմնցած էր: Խնդրեմ, պատասխան տուր ինձ. միթէ կատակերգութիւն և ողբերգութիւն լատիներէն կը ձևացընեն. միթէ դատ մը լատիներէն կը վարեն. միթէ սէրը լատիներէն կը բացատրեն: Երիկն այս փաստերէս կապուելով կարճ կապեց և իր կարծիքը դատապարտեց: Ուստի որոշուեցաւ որ դեռահաս մարքիզը չըլլայ որ ժամանակ անցունէ Կիկերոն, Օվրատիոս և Վիրգիլիոս ճանչելու:

— Բայց կ'աղաչեմ, ըսաւ հայրը, ուրեմն ի՞նչ պիտի սորվի տղաս. գոնէ բան մը գիտնալ պէտք չէ՞ մի: Գէշ չըլլար թէ որ քիչ մը աշխարհագրութեան վարժի:

— Ի՞նչ պէտք է, պատասխանեց դաստիարակը. երբոր պ. մարքիզը իր կալուածներն և հողերը պտըտելու երթայ, միթէ կա-

ուավարներն Ճանրանները չեն գիտեր. անհոգ եղիր այն կողմէն, անոնք չեն մոլորիր: Քառորդ բոլորակի պէտք չկայ ամենեն Ճանրորդութեան առեն. և Փարիզէն Օվէրն խիստ դիւրաւ կ'երթայ մարդ մը, առանց գիտնալու թէ որ ըսյնութեան աստիճանին տակ կը գտնուի:

— Իրաւունք ունիս, պատասխանեց Հայրը. բայց անցած օր գեղեցիկ գիտութեան մը վրայ կը խօսուէր, որ կարծեմ աստղաբաշխութիւն կը կոչուի:

— Ի՞նչ պարապ բան, վրայ բերաւ դաստիարակը. միթէ աս աշխարհիս մէջ աստղերուն նայելով կը շարժինք. և մեղք չէ՞ որ պ. մարքիզը գլուխը Ճաթեցընէ խաւարում մը հաշուելու, երբ ձեռքովը դրածին պէս օրացոյցին մէջ օրովը և ժամովը կը գտնէ. անկից զատ՝ շարժական տօները, լուսնին և բոլոր Եւրոպայի իշխանաՀինգշաբթի տարեկան ըլլալը նաև կը գտնէ:

Տիկինը բոլորովին դաստիարակին հետ համամիտ եղաւ. նորահաս մարքիզին խնդութեանը չափ չկար. իսկ տպնանքն ու անստուգութիւնը Հայրը պաշարեր էին:

— Ուրեմն ինչ պէտք է տրվկցընել մեր տղեկին, կ'ըսէր կ'երթար:

— Սիրուն ըլլալ, պատասխանեց մատենագիրը. ու թէ որ հաՃելի ըլլալու հնարը անդամ մը Ճանչէ, ամեն բանի բանիբուն եղած կը սեպուի: Այս ալ արհեստ մ'է, զոր մօրը քով տրվիլ հարկ է անոր, առանց իրարու նեղութիւն տալու:

Այս խօսքիս վրայ տիկինը զգուեց զսիրուն տղէն ու ըսաւ.

— Պարոն, կը նայիմ որ աշխարհիս մէջ եթէ գիտուն մը կայ, դուն ես. իմ որդիս իր դաստիարակութիւնը քեզի շնորհապարտ է. սակայն կը մտածեմ որ զէշ չըլլար եթէ քիչ մը պատմութիւն գիտնայ:

— Ափսո՛ս, տիրուհիս, պատասխանեց մատենագիրը. ինչ օ-

գուտ ունի այն պատմական տեղեկութիւնը. եթէ Ճիշտը կ'ուզես, միտակ արդի անցքերը օգտակար են ու զուարճալի. հիներն, ինչպէս որ մեր երեւելի գրագէտներէն մէկը կ'ըսէր, ստայօդ առասպելներ են. իսկ նորերուն համար՝ խաւարային բաւիղ մը, և անկէց պրծիլը անհնարին բան: Ինչքան պէտք է պ. մարքիզին, թէ մեծն Կարոլոս Գաղղիոյ տան տեղեկալները հաստատած է, և թէ անոր յաջորդը թոռնով էր:

— Շատ սքանչելի խօսեցար, գոչեց դաստիարակը. ինչքան անպիտան ծանօթութիւններու բեռով կը Ճնշին և կ'ընեՃին տղոյ միտքը: Ըստ իս, գիտութիւններուն ամենէն այլանդակն և մարդուս հանՃարը հիմնովին չորցընողն երկրաչափութիւնն է: Այս ծաղրաշարժ գիտութիւնը մանկութիւց, գծերու և կէտերու վրայ կը խօսի, և սակայն բնութեան մէջ անգոյ բաներ են: Միտքով մէկը կ'ելնէ բիւրաւոր կոր գիծեր բոլորակի մը և զանիկա շօշափող կէտ մը կ'անցընէ, թէև իրօք և ոչ շիղ մը հնար է անկից անցունել: Ճշդիւ կ'ըսեմ որ երկրաչափութիւնն ոչ համ ունի և ոչ հոտ, ուստի անդի խեղկատակութիւն մ'է:

Այր ու կին և ոչ բան մը հասկրցան դաստիարակին ըսածներէն, բայց հաՃ ու հաւան գտան անոր հետ: Դաստիարակը նորէն շարունակեց այսպէս. «Պ. մարքիզին պէս մեծազգի երիտասարդ մը ինչքան գլուխը մաշեցընէ աս նոսիր ուսումներուն մէջ. թէ որ օրին մէկը հարկ ըլլայ իր երկիրներուն յաւակալիծը հանել, սակաւը կրնայ լրեալ տալ: Թէ որ իր ազնուական տոհմին սկիզբն, որ անշուշտ ժամանակին մթութեան մէջ կը կորսուի, ուզէ քննել, թող Պենեդիկդեան քահանայ մը կանչէ: Նոյն բանը ըսելու է որ և իցէ արհեստից համար ալ: Բնաւոր ձիրքերով երիտասարդ մը՝ ոչ պատկերահան է, ոչ երաժիշտ, ոչ Ճարտարապետ և ոչ քանդակագործ, հապա իր Ճոխութեամբը բոլոր արհեստները կը ծաղկեցընէ: Անտարակոյս, գովելին է՝ տեսնել պաշտպան հանդիսանալ քան թէ գործակից: Պ. Մարքի-

զը Ճաշակ չունի՞ մի, ասա բաւական է. գործաւորներու կ'ընկնի անոր համար աշխատիլը. և Ճշմարիտ է այն խօսքն որ կ'ըսեն, թէ մեծերը (կ'ուզեմ ըսել հարուստները) ամեն բան գիտեն, ա-ռանց բան մը սորված ըլլալու։ Պատճառն այն է, որ ժամանակ իրենց հրամայած և վճարած իրերուն վրայ Ճշդիւ դատողութիւն մը կ'ստանան։

Ան ատեն չնաշխարհիկ տղէտ մատենագիրը սկսաւ խօսիլ այսպէս։ — Քաջ խելքդ հասեր է, տիրուհիս, որ մարդուս գլխաւոր վախճանն է՝ աշխարհիս մէջ յաջողութիւն գտնելը։ Ճշմարիտն ըսէ. միթէ գիտութեամբ մարդս ձեռք կը ձգէ այս յաջողութիւնը։ Վասն զի որ խելացին միտքէն կ'անցնի որ ընկերութեան մէջ երկրաչափութեան վրայ խօսք բանայ. երկ մէկը հարցուցած ունի պատուաւոր անձի մը՝ թէ արեգական հետ այսօր որ աստղը կ'ելնէ, ո՞վ որուն կը հարցնէ Ճաշի ատեն՝ թէ գիսաւոր գոլտիոնը Հռենոս գետէն անցած է, թէ ոչ։

— Անշուշտ և ոչ մէկը, գոչեց տիկինը, որ գեղեցկութեանը պատճառաւ քիչ շատ մտեր ելեր է ընկերութիւններու մէջ. ես ալ բնաւ չեմ ուզեր որ տղուս բնական հանճարը խանդարի անշնորհ ուսանող վարժելով։ Բայց վերջապէս բան մ'ալ պէտք չէ՞ որ սորվի. ինչու որ ժամանակին հարկ է որ երիտասարդ մը փայլի, ինչպէս որ ամուսնոս ալ կ'ըսէ։ Աբբայէ մը լսած ունիմ թէ ամենէն սիրալիր գիտութիւնն է.... անունը մոռցեր եմ, բայց Դ—ով կ'սկսի։

— Դ—ո՞վ մի,

— Դ—ով.

— Դիցաբանութիւն չըլլա՞յ։

— Չէ։

— Ուրեմն դիմագրութիւն, դրոշմագրութիւն.

— Հա՛, հա՛, դրոշմագրութիւն։

— Ստուգիւ բարձրագոյն գիտութիւն մ'է այդ և քաղաքակիրթ ազգերու մէջ խիստ յարգի, սակայն հինգտաս քանի որ կառայ դոնակին վրայ գէն ու զարդ նկարելու սովորութիւնը վերցաւ։ Ակիզ զատ՝ այս ուսմունքն հասարակ բան մ'եղեր է հիմակ. մինչև անգամ սափրիչ մը իր գինագրոշներն ունի, և քաջ գիտես որ գռեհիկ դարձած բան մ'անշնորհ կ'երևի ամենուն։

Վերջապէս, ասոնց հանճարիմաստ անձերը բոլոր գիտութիւններու ալէին ու գէշը զնեցին ետև, որոշեցին որ պ. մարքիզը պար պարել սորվի։

Մարքիզը բնաւիր տաղանդ մ'ունէր որ յանկարծ զարմանալի կերպով զարգացաւ։ Անուշ անուշ տաղեր երգել գիտէր։ Այս գերազանց ձիրքը իր երիտասարդական շնորհներուն հետ միանալով մեծամեծ յոյսեր տուաւ ամենուն։ Կանանց սիրելին եղաւ, և գլուխը երգերով լեցուն լինելուն՝ իր սիրուհիներուն համար ալ սկսաւ շարադրել։

Երգի մը մէջէ Բաքոսն ու Սէրը, ուրիշէ մը Գիշերն ու Ցորեկը և ուրիշ երգէ մ'ալ Հրապոյրքն ու Երկիւղը կը գողնար և իր գործը կը տեսնէր։ Բայց որովհետև շինած ոտանաւորներուն մէջ միշտ քանի մը վանկ աւելի կամ պակաս կը գտնուէր, քսան ոսկի տալով ուղղագրել կ'տար ուրիշին ձեռքովը, և այս կերպով երևելի բանաստեղծներուն կարգն անցաւ։

Այն ատեն մարքիզուհին կարծեց թէ իր փառքին հասաւ՝ գիտնական զաւակ մ'ունենալով, և Փարիզի իմաստակներուն խնջոյք մը տուաւ։ Երիտասարդն ունեցած քիչ մը խելքն ալ թռուց. սկսաւ խենդ ու խելառ բաներ ըսել. և ամեն բանի անպիտան ըլլալու վարժութիւն ստացաւ։ Հայրը տեսնելով իր որդւոյն Ճարտարիսօսութիւնը, շատ զղջաց անոր լատինէրէն չսովորեցնելուն վրայ, ինչու որ դատաւորական պաշտօնի մը կրնար

դինքը հասցունել: Իսկ մայրը՝ որ աւելի մեծամիտ էր, իր որդին գնդապետ ընելու աշխատեցաւ, ան ալ մինչև այս գործին յաջողելը՝ սիրտ հիներու եռանէ եղաւ: Երբեմն սէրը գնդէ մը աւելի սաղ կը նստի մարդուս: Շատ ստակ վատնեց: Ծնողքն ալ ամուսնական կեանք վարելու համար քսանին կը ցանկացնէին:

Այրի կին մը, որ իրենց գրացի էր և քիչ մ'ունեւոր, միտը դրաւ որ Ժանոյենց հարստութեան վրայ նստի գեղահասակ մարքիզին հետ կարդուելով: Ուստի նախ պատանին որսաց, սէր կեղծեց, քիչ զարնուեր եմ ըսաւ, քիչ քիչ զանի իրեն մօտեցաւ, զմայլեցաւ և վերջը ամուսնաւոր իր լուծն ամոր վիզը անցաւ: Մերթ գովեստ և մերթ խրատ կտար ամոր, և քիչ ժամանակէն հօրն ու մօրը մէկ հատիկ բարեկամուհին եղաւ: Պատաւ գրացուհի մ'ալ խնամութեան միջնորդութիւն ընելու եկաւ: Ծնողքն այս խնամութեան շքեղութենէ ոգանչանալով յօժարամիտ յանձն տուին, և մէկէն իրենց սրտակից և անսուտ բարեկամուհիին խօսքակալ տուին: Գեղահասակ մարքիզը այդպիսի կնկան մը հետ սլիսի կարդուէր, որուն վրայ կը խենդանար, և ան ալ սինքը սատսիկ կը սիրէր: Ամէն կողմէն շնորհաւորութեան ձայներ կը լսուէին. ասղին ամուսնութեան դաշինքը և անդին հարսնեաց հանդերձներն ու երգը կը պատրաստուէին:

Առաւօտ մ'երբոր Ժանօ իր չքնաղագեղ սիրուհւոյն տարը նստած՝ կ'ուրախանար ամոր բարեկամութեան և սիրոյն արժանի ըլլալուն վրայ, և 'ի միասին ամուշ ու վատվատուն խօսակցութեամբ մ'իրենց երջանկութեան ասղի ճաշակը կ'առնուին՝ զմայլելի կեանք մը վարելու համար նորանոր գիտութիւններ հնարելով, յանկարծ տարնատան մօրը սպասաւորը ներս կը մտնէ ու կ'ըսէ. «Ի՞նչ նստեր էք, սև սև լուրեր ունիմ քովս: Ոստիկանութեան զինուորներ եկան, ասին 'ի վեր կ'ընեն ձեր տունը և շատ մը պարտաւորներ ամէն բան կը վերցնեն կը տանին:

Հայրդ ալ բանտարկելու ձայն մը կը տարտի. երթամ շուտ եմ իմ ամանակներս անկէ բրցունելու աշխատիմ»:

— Ես հիմակ կ'իմանամ ինչ ըլլալը, ըսաւ մարքիզը:

— Աղէկ ըսիր, գնա սա սատհանները պատժէ, շուտով գնա, ըսաւ այրի կինը:

Ժանօ թռաւ գնաց տուն: Բայց հայրն արդէն բանտ դրուած էր, ծառաներն ալ ամէնքը մէկ մէկ կողմ դացեր էին, կրցածնին վերցնելով: Ժանօ մինակ մայրը հոն գտաւ անօդնական և արտասուքներու մէջ թաթխուած. ինչու որ մինակ իր հարստութեան, գեղեցկութեան, սխալանաց և անձնոնի ծախսուցը յիշատակը քովը մնացեր էր:

Մայր ու տղայ երկար ատեն մէկտեղ ողբալէն ետև, վերջապէս երիտասարդն ըսաւ: «Զյուսահատինք, ան գեղահասակ որբեւարին վրան կը խենդայ, և հաւատամ որ աւելի մեծանձն է, քան թէ հարուստ. ուստի ամոր սիրոյն և սրտին վրայ վստահ եմ: Հիմակ մէկէն ես ամոր քովն կը վազեմ՝ կ'երթամ և գինքը հոս կը բերեմ քեզի:

Ժանօ խսկոյն իր սիրուհւոյն գիմաց և զանի ամենասիրուն գեղանուրականի մը հետ գլուխ գլխի ստաց գտաւ:

— Ի՞նչ, դուն ես Պ. Ժանօյենց. ինչ բան ունիս հոս, մայրդ ինչու մինակ թողուցիր. գնա ան խեղճ կնկան քով և ըսէ իմ կողմէս որ իրեն բարիքը միշտ կ'ուզեմ: Ուստի ինձ նաժիշտ մը պէտք է և ինք իմ բանիս շատ աղէկ կ'գայ:

— Մանչուկ, Ճարպիկ տղայ մը կ'երևիս ինձ, ըսաւ անդիէն գինուորականը, թէ որ քովս մնաս՝ քեզի բաւական ամանակ մը կը կապեմ:

Մարքիզն այս խօսքը լսելով գետինն անցաւ, և սիրտը կատաղութեամբ լի, գնաց իր հին դատիարակին իր ցաւը յայտնեց և խորհուրդ հարցուց:

— Դուն ալ վարժապետ եղիր, ըսաւ անոր դասախարակը:

— Ափսոս, բան մը չեմ գիտեր, ինձ բան մը չսորվեցուցիր; և իմ թշուառութեանս առաջին պատճառը դուն ես։ Աս ըսելով կ'ողբար ու կը հեծկլտար:

— Վիպասանութիւն չկնիէ, ըսաւ անոր խնամակ մը, որ ներկայ էր հոն։ Փարիզի մէջ պատուական արհեստ մ'է։

Երիտասարդը յուսակտուր և ճարը գրեթէ հատած՝ իր մօրը խոստովանահօրը գնաց։ Ասի անուանի կրօնաւոր մ'էր Ճիզվիթական կարգէն, և բոլոր երևելի ու Հոս կանայքը միայն ձեռքին տակն առած էր։ Ուստի իր Ժանօն տեսնելուն պէս՝ անոր դէմ վազեց ու ըսաւ. «Ա՛հ պ. մարքիզ, ո՞ւր է կառքդ. աղնուաշուք մարքիզուհի մօրդ կենցաղավարութիւնն ի՞նչպէս է»։

Խեղճ երիտասարդն իրենց գլխուն եկած ձախորդութիւնը պատմեց: Քանի խօսքը յառաջ կը տանէր, կրօնաւորն աւելի ծանր, անտարբեր և վեհ կերպարանք մը կ'առնուր։ «Ո՛րդեակ, ըսաւ, ահաւասիկ Աստուած այս վիճակիս մէջ ձգելուցդ զձեզ. հարստութիւնը մարդուս սիրտը կ'աւրէ։ Ուստի Աստուած շնորհ ըրաւ մօրդ՝ զինքը սնանկ աղքատի մը վիճակի մէջ ձգելով»:

— Այո՛, այնպէս եղաւ, տէր իմ:

— Անկից աղէկ ինչ կ'ուզես, անկասկած իրեն փրկութիւնը դուն։

— Բայց, հայր իմ, գոնէ առ ժամս քիչ մ'օգնութիւն դտնելը հնարաւոր չէ՞ մի այս աշխարհիս մէջ:

— Մնաս բարեաւ, որդեակ, դուրսը պալատական կին մը գիս կ'սպասէ, երթամ:

Նոյն միջոցին մարքիզին մարելիքը եկաւ։ Բոլոր միւս բարեկամներէն ալ նոյն ընդունելութիւնը գտնելով՝ քանի մը ժամու մէջ աւելի կարող եղաւ աշխարհս ճանչել՝ քան թէ բոլոր կեանքին մէջ:

Երբոր մարքիզը յուսահատութենէն ինքզինքը գետնէ դեռին կը զարնէր, տեսաւ որ հեռուէն հինգեկ կառք մը կ'գար, որ ծածկուած դերեզմանի մը կը նմանէր՝ չորս կողմէն կաշիէ վարագուրով գոցուած. ետևէն ալ չորս հաս խոշոր սայլ կ'գային բեռնաւորած։ Կառքին մէջ հնոտի հագուստով երիտասարդ մը կար կլոր ու թարմ դէմքով, որուն վրայ զուարթութիւն ու քաղցրութիւն կը փայլէր։ Իսկ իր թիւերուս կինը՝ որ գեղջկական աղուորութիւն մ'ունէր, իր քով պրեր նստեր էր։ Կառքը իշխանի մը կառքին պէս արագ արագ չէր երթար. ուստի ճանապարդը ուզածին պէս խեղճ մարքիզին յուսահատ կերպարանքը գիտեց և յանկարծ գոչեց. «Ա՛հ, տէր Աստուած, կարծեմ թէ նոյն ինքն Ժանօն է»։ Այս խօսքիս մարքիզը աչքը վերցուց, կառքը կանգ առաւ։ «Հա՛, հա՛, նոյն ինքը Ժանօն է»։ Այս ըսաւ, ու գիրուկ գեղջուկը կառքէն վար ցատկելուն պէս՝ գնաց իր հին ընկերակցին պլլուեցաւ։ Ան ատեն Ժանօն ճանչցաւ որ ան տեսած գեղջկին Քօլէնն է։ Կարմրութիւնն և արտասուք երեսը կը ծածկեն։ «Դուն գիս երեսի վրայ թողուցիր, ըսաւ անոր Քօլէն. բայց որչափ երևելի իշխան ըլլաս, դարձեալ գքեզ պիտի սիրեմ»։ Ժանօ շփոթած և սիրտը եղած՝ հեծեծելով գլխուն եկածներն անոր պատմեց։ Քօլէն ըսաւ. «Եկուր իմ բնակած պանդոկս երթանք և մնայածն ալ հոն պատմէ։ Իմ պզտիկ կնկանս բարև տուր և երթանք նաև միատեղ ճաշ ընենք»։

Ան ատեն երեքնին ալ ոտքով և կառքերը ետևնին ձգած ճանրայ եղան։ «Աս բոլոր կահ կարասին ինչ պիտի ըլլայ, քիվիդեն»։

— Այո՛, բոլորն ալ իմն ու կնկանս են։ Մեր քաղաքէն կը գանք. ես այս օրերս երկաթի գործարանի մը վերակացու կարգեցայ, հարուստ վաճառականի մը աղջկան հետ ալ կարգուեցայ։ Անդադար կ'աշխատինք և Աստուած մեզ կ'օրհնէ։ Բնաւ

միմեանց չփոխեցինք և երջանիկ ենք, և մեր Ժանոն բարեկամին պիտի օգնենք. բարեկամ, եկուր ալ մոռցիր մ՚ըլլար, աշխարհիս բոլոր մեծութիւնը բարեկամի մը մի փոխեր. եկուր ինձ հետ մեր հայրենիքը դարձիր, հոն իմ արհեստս, որ դժուար չէ, քեզի կը սորվեցնեմ, և տուն տեղ ըլլալով ուրախ զուարթ մեր ծնած երկրին մէկ անկիւնը կ՚ապրինք:

Ժանոն ապշած՝ զմայլան հոգերով, ուրախութեամբ, սիրով և ամբոխով լեցուած էր: Քթին տակէն ինքնիրեն կ՚ըսէր: «Բոլոր իմ նորելուկ բարեկամներս գիս մատնեցին, և միտակ Քօլէնը՝ զոր արհամարհեցի՝ հիմակ ինձ օգնութեան կը հասնի: Ի՞նչ խրատ է աս դէպքս ինձ»: Քօլէնին բարեսրտութիւնը Ժանոյն բնածին դեղեցիկ բնաւորութեան կայծը նորէն արծարծեց, զոր մարդկան ապականեալ բարքը դեռ չէին մարած: Իր հայրն ու մայրը հոն երեսի վրայ թողուլը՝ իրեն խիստ դառն կդար: «Քու մօրդ ալ հոգ կը տանինք, ըսաւ Քօլէն: Իսկ քու միամիտ հայրդ որ բանտարկեալ է, քիչ մը գործէ կը հասկընամ. թող համբերէ, մինչև որ պարտատէրները տեսնելով որ բան մը չունի ձեռքը, քիչով գոհ ըլլան: Ան ատեն ես ալ ամեն բան յանձն կ՚առնում»:

Եւ ստուգիւ Քօլէնը ձեռքէն եկածն ըրաւ որ անոր հայրը բանտէն հանելու սայ: Վերջապէս Ժանոն ծնողացը հետ հայրենիքը դարձաւ, և իրենց առջի արհեստը ձեռք առին: Հոն Քօլէնն ալ քրոջը հետ ամուսնացաւ, որն որ իր եղբօրը բնաւորութենէն ըլլալով էրիկը երջանիկ ըրաւ: Ան ատեն Ժանոյենց հայր, մայր ու որդի հասկրցան, որ երջանկութիւնը մտափառութեան մէջ չկանուիր:

ՎԵՐՋ ԺԱՆՈՅ ԵՒ ՔՕԼԷՆԻ

ՀՀ Ազգային գրադարան
NL0342941